№ 67 ՇԱԲԱԹ, 27 ՄԱՐՏԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 27 ՄԱՐՏԻ № 67

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում վճարում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 228

Եկատերինա Դեժէնտրիեվնա, Ալեքսանդր և Աննա Մելիք-Այվազեաններ, Հռիփսիմէ և Ալեքսանդր Մատէշվիլիներ, Զարուհի և Յովսէփ Մելիք-Չհանեանները յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր ամուսնու, երկրորդը, երրորդը և չորրորդը իրանց հօր, հինգերորդը իր աներոջ, իսկ վերջինները իրանց մօրեղբօր՝ ՆՈՒԽԵՑԻ

ԱՂԱՍԻ ՄԵԼԻՔ-ԱՅՎԱԶԵԱՆԻ

եղեռնական մահը: Ամբիծը լինելու է այսօր, շաբաթ, երեկոյեան ժամը 7-ին իր բնակարանում (Сергіевская № 1. кв. 10), իսկ յուղարկաւորութիւնը վաղը, կիրակի, ամսի 28-ին, առաւօտեան ժամը 10-ին դէպի Հավլաբարի ս. Լուսաւորիչ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքում:

Աղա, Շուշանիկ, Բագրատ, Արտաշէս, Սարգիս, հարսներ՝ Նուարդ և Սալոմէ ՄՈՒՐԱԴԵԱՆՑՆԵՐԸ յայտնում են իրանց ազգականներին ու ծանօթներին՝ առաջինն իր թանգագին քրոջ, երկրորդն իր սիրելի տալոջ, իսկ երրորդը, չորրորդը և հինգերորդը իրանց անմոռանալի հօրաքրոջ

Եփիմիա Սարգսեան ՁՕՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մարտի 23-ին: Ամբիծքն այսօր, շաբաթ, երեկոյեան ժամը 6½-ին հանգուցեալի բնակարանում (Հավլաբար, Զօրաբաշսկայա փող., № 28, սեփ. տ.): Յուղարկաւորութիւնը վաղը, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին, դէպի ս. Էջմիածնեցոց եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:
346. 1—1

ԵՍ, ԱՆՆԱ ՉԻԼԼԵՐՍ,

աճեցրել եմ իմ անսովոր երկար (185 սանտիմէտր երկար.) մազերս—որ յիշեցնում է Լօրէլէյի մազերը—շնորհիւ իմ հնարած առանձին պօմադայի 14-ամեայ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ: Այդ պօմադան ճանաչված է լաւ միջոց մազերը թափվելու դէմ, միևնոյն ժամանակ նպաստում է նրանց աճման և արմատների ամրացման: Տղամարդիկ, շնորհիւ այդ պօմադայի, ունենում են խիտ և ճոխ երկար միրուք, նոյնպէս և (մինչև անգամ կարճ ժամանակեայ գործածութիւնից յետոյ) գլխի մազերի և միրուքի խտական փայլ: Միևնոյն ժամանակ պօմադան պահպանում է մազերը շուտ ճերմակելուց, նոյնիսկ ծերութեան ժամանակ:

Բանկայի գինը
3 եւ 5 րուբլի

Գլխաւոր պահեստը՝ Кавказское Т-во Торговли Аптекарскими товарами, Թիֆլիսում, Բագուում և Բաթումում: (շ. հ.) 85 (ա.) 25—19

Երկուշաբթի, մարտի 29-ին
Արտիստ. Ընկ. համերգային դահլիճում
Կայանալու է
ՄԵԼԷՔ-ՀԱՆԸՄԻ բենեֆիսին
ՀՐԱԺԵՇՏԻ ԵՒ ՎԵՐՋԻՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՄԵՐԳ

Տոմսակները կարելի է ստանալ թատրոնի կասսայում և «Южная молочная» սրճարանում:

Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին:
Կառավարիչ՝ Մ. Պօղոսեան (համարներ «Пале-Роялъ» № 7, Դվորցովայա փող.):
(շ. կ.) առ. 348. 2—1

ԳՐԱԿԱՆԱԳԷՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Այս անգամ մեծ խոչընդոտների հանդիպեց գրականագէտների համագումար կազմելու գործը:

Մի քանի անգամ նոյնիսկ լուրեր երևացին մամուլի էջերում, որ նա այլ ևս չի լինելու այս գարնան, որ նա յետաձգվել է մինչև աւելի բարեպատեհ ժամանակ:

Ներկայացված ծրագիրը չընդունվեց ամբողջութեամբ, կրճատ ծրագիրն էլ չէր բաւականացնում գրականագէտներին:

Մասնակցե՞լ, թէ չը մասնակցել—հարցնում էին իրար գրականագէտները և դժուարանում էին պատասխանել: Նրանց մի մասը որոշեց չը մասնակցել, բայց մի ստուար բազմութիւն պնդում էր, որ պէտք է օգտվել նաև ներկայ դէպքից և գրական մի քանի կարիքների խնդիրները յուզել, թողնելով միւսները աւելի նպաստաւոր օրերի համար:

Վերջապէս համագումարը նշանակվեց և նա պէտք է տեղի ունենայ Զատկից յետոյ:

Ծրագրի կէտերի մէջ աչքի են ընկնում մեծ մասամբ իրաւաբանական և էտիկայի խնդիրներ, օրինակ՝ հեղինակի իրաւունքը, գրական միջազգային դաշնագիր, գրականագէտների փոխադարձ յարաբերութիւնները, պատճէ՞ «դատարանը»: Միւս խնդիրներից յիշատակենք պօստային և հեռագրական սակագները, գրական ընկերակցութիւնների, հրատարակչական բարեփոխութիւնների խնդիրները:

Համագումարը տեղի կունենայ, և գրական կարիքների մասին եթէ ոչ ընդարձակ ծաւալով, գոնէ որոշ չափով կը խօսեն հիւսիսի գրականագէտները:

Բայց կարևոր էր լսել և մեր երկրի գրականագէտների ձայնը:

Մեր կարիքները մի կողմից արձագանք են այն ընդհանուր կարիքների, որոնք զգացվում են Ռուսաստանի միւս մասերում, բայց կան և այնպիսիները, որոնք աւելի բնորոշ են մեր երկրի համար:

Եւ անտարակոյս ցանկալի էր, որ մեր երկրի համար կարևորութիւն ունեցող խնդիրները գտնէին համագումարում արտայայտութիւն այն ձևաւորութեամբ, որ համապատասխան է մեր շահերի ճշգրիտ ըմբռնումին:

Օրինակ՝ հեղինակի իրաւունքի հետ կապված է թարգմանութիւնների իրաւունքը: Մինչև այժմ մենք թարգմանել ենք թէ ռուսերէնից և թէ օտար լեզուներից ազատօրէն, առանց իրաւունք հարցնելու հեղինակներից և առանց վարձատրելու նրանց: Երբեմնապէս նախկին գրաքննական ատեանը պահանջում էր, որ թարգմանիչները ներկայացնեն հեղինակների համաձայնութեան վկայաթղթեր, բայց դա սիստեմաբար չէր կատարվում և առհասարակ զանցառութեան էր տրվում իրականութեան մէջ: Այդպիսի մի պահանջ մեր մատաղ կովկասեան գրականութեան համար նկատվել է իբրև աննպաստ, իբրև բացասական պահանջ, որը կարող է միայն դժուարութիւններ ստեղծել հրատարակչական գործի համար՝ առանց օգուտ բերելու հեղինակներին, որովհետև դժուար կարելի է երևակայել, թէ հեղինակների մեծագոյն մասը վարձատրվելու յոյս ունենայ այնպիսի աղքատ գրական շուկայից, ինչպէս է հայ-վրացական գրական շուկան: Իսկ աւելորդ գրագրութիւններ, հեղինակների հետ բանակցութիւններ վարելու ձևականութիւնները և ուրիշ արգելառիթ հանգամանքները այնպէս կը զզվեցնեն մարդկանց, որ հրատարակիչները ձեռք կը վերցնեն թարգմանութիւններից, իսկ դա ամենևին ցանկալի չէ մի այնպիսի աղքատ գրականութեան համար, ինչպէս որ հայկականն է:

Մենք կարող էինք բերել և ուրիշ օրինակներ և ցոյց տալ մեր երկրի պայմաններին յատուկ թելադրանքներ, որոնք պարտաւորեցնում են առանձին ուշադրութիւն նուիրել մեր հանգամանքներին: Յիշեցնենք, թէկուզ, այն աննպաստ պայմանը, որ ստեղծվել է մեզանում հեռագրների տպագրութեան վերաբերութեամբ: Այն ժամանակ, երբ ռուսերէն լեզուով հրատարակվող լրագիրները անմիջապէս տալիս են հեռագիրները տպագրութեան, հայ և վրաց լրագիրները ստիպված են նոյնը թարգմանել արագութեամբ և ապա յանձնել ապարանին: Այդպիսով տեղական լեզուներով հրատարակվող մամուլն ունի թէ ժամանակի կորուստ և թէ աւելի ծախք թարգմանիչների վրա:

Այդ և դրանց նման հանգամանքները կարևոր դեր են կատարում գործնական կեանքի մէջ և ազդում են տեղական գրականութեան զարգացման գործի վրա:

Այնտեղ, ուր ներկայացվում են ամբողջ պետութեան գրական գործոնների շահերը և կարիքները, անարդար կը լինէր եթէ չը ներկայացվէին և մեր երկրին վերաբերեալ առանձնայատկութիւնները:

Իսկ արդեօք շատե՞րն են մեր երկրից մասնակցելու գրականագէտների համագումարին: Եւ եթէ մասնակցելու են, արդեօք պարզե՞լ են այն բոլոր կարիքները, որ զգացվում է մեր գրական իրականութեան մէջ:

Պատասխանը պարզ է:

Մինչև այժմ հոգատար չենք եղել: Իսկ ի՞նչ կարող ենք կարճատև ժամանակում անել:

Միշտ անպատրաստ:

Ահա մեր յատկանիշը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 25 մարտի

Արտաքին գործերի մինիստրը մի քանի շաբաթով ճանապարհ ընկաւ արտասահման արձակուրդի: (Հ. Գ.)

Պետերբուրգ, 25 մարտի

Զինուորական մինիստրը ճանապարհ ընկաւ արտասահման: (Հ. Գ.)

Կ. Պօլիս, 25 մարտի

Հանդիսաւոր ճաշին սուլթանի մօտ սերբիական թագաւորը նստած էր սուլթանի կողքին, թագաւորի աջ կողմը նստած էր դեսպան Պալլավիչինի, սուլթանի ձախ կողմը—մեծ բրիտանական դեսպան Լոուտեր, սուլթանի դիմաց—թագաժառանգ Իւսուֆ-Իզեդդին, նրանից աջ կողմը—ռուսաց դեսպան Չարիկով, ձախ կողմը—ֆրանսիական դեսպան Բօմպար: Թագաւորը շնորհեց մեծ վէզիրին և արտաքին գործերի մինիստրին Կարագեօրգիի ժապաւէնները, մնացած թիւրքական մինիստրներին Սավվայի ժապաւէնները: (Հ. Գ.)

Կ. Պօլիս, 25 մարտի

Սերբիական թագաւորն այցելեց քաղաքը և զբօսանք կատարեց Բոսֆորի վրա:

Պրիշտինեան միւթեսարրֆը հեռագրով խնդրում է Բ. Դռնից գրագրութիւն սկսել կաթոլիկ միտրօպոլիտի հետ տեղական հոգևորականութիւնը ճնշելու նպատակով, որովհետև սա երկպառակութիւններ է ցանում ալբանական շրջանում: Միւթեսարրֆը մանաւանդ գանգատվում է կաթոլիկ Իկօնոս քահանայի վրա, որը փախաւ լեռները ապստամբախմբով և գրգռում է ազգաբնակութեանը անհնազանդ լինել և հրոսակախմբեր կազմել: (Հ. Գ.)

Թեհրան, 25 մարտի

Կաբինէտի դրութիւնը խախուտ է: Արտաքին գործերի մինիստրը հրաժարական տուեց: (Հ. Գ.)

Բեռլին, 25 մարտի

«Դէյտշէ-Կաբէլ-Գրամ-Գէզելշաֆտ» լրագրին հաղորդում են Ադդիս-Աբեբայից, որ կայսրուհի Տախտու դիմեց մեծ-բրիտանական դեսպանին՝ խնդրելով պաշտպանութիւն: Դեսպանը մերժեց խնդիրքը: (Հ. Գ.)

Բուէնոս-Այրէս, 25 մարտի

Չիլիի և Արգենտինայի կառավարութիւնների ներկայացուցիչների ներկայութեամբ հանդիսաւոր կերպով բացվեց թունէլ Կորդիլիէրի վրայով 3000 մէտր երկարութեամբ: (Հ. Գ.)

Երուսաղէմ, 25 մարտի

Պրինց Էյտէլ-Ֆրիդրիխ իր ամուսնու հետ այցելեց ռուսական տունը Ձիթենեաց սարի վրա: (Հ. Գ.)

Պետերբուրգ.—Դուբրովինը պատասխանատուութեան է ենթարկվում Նորին Մեծութեանը վիրաւորելու համար:

Կուլուարներում հաղորդում են, որ ընդհանուր ուսման օրինագիծը վերաքնին յետաձգվեց մինչև աշուն:

Բժշկական խորհուրդը գտաւ, որ Պետերբուրգին սպառնում է խօլերա:

Ռօդզեանկօ հրաժարվեց հոկտեմբրիստների ֆրակցիայի նախագահի օգնականի պաշտօնից: Այդ հրաժարականը արգասիք է ներքին կռուի նախագահական տեղի համար: («Б.»)

Թեհրան.—Վերջին շաբաթս անգլիացիները կամաց-կամաց գրաւում են Պարսից ծոցի ափ-հնդիկ զօրքերով: Բուշիրի մօտերը Չիջէկ գիւղում գիշերով ափ իջան 500 սիփահներ չորս թնդանօթներով:

Պարսկական մի լրագրի հեռագրում են Պետերբուրգից, որ ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան մէջ նկատվում է բացարձակ տրամադրութիւն յետ կանչելու ռուսաց զօրքերը Պարսկաստանից:

Լուրերին նայած կառավարութիւնը յանձնարարեց Եփրեմին կռիւ մղել Արդաբիլի շրջակայքում սաստկացող կողոպուտների դէմ: («Б.»)

Կիեվ.—Հարաւ-արևմտեան երկաթուղիների կառավարիչը առանց խնդրագրի արձակեց 775 ծառայողների: («Б.»)

Բեռլին.—Ամբողջ երկրում տեղի են ունենում Գերմանիայի բանւորական կազմակերպութիւնների խորհրդակցութիւններ: («Б.»)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 18 մարտ

Երկու օր առաջ մեկնեցան Բուլղարիոյ թագաւորն ու թագուհին իրենց հետևորդներովը: Իր մուտքին պէս փառաւոր եղաւ ելքն ալ Պօլսէն. ծափեր, թնդանօթներ, հուրրաներ ողջերթի առեն. զինուորական ողջոյններ, հրաժեշտի բարևներ և բիւրաւոր նայուածքներ, որոնք կընկերանան հիւրերուն: Սուլթանը, իր պալատէն մինչև երկաթուղիի մայր-կայարանը, ընկերացաւ արքայական ամոլին:

Թողլով որ արդէն յայտնի ըլլայ թէ ինչ բարերար ազդեցութիւններ պիտի ունենան այդ այցելութիւնները՝ երկու քաղաքական դրացի երկիրներու մէջ, մեզի կը մնայ ըսել, թէ լաւ յիշատակներ կը թողուն Պօլսի մէջ Բուլղարիոյ թագաւորն և թագուհին: Առաջինը, պաշտօնական այցելութիւններէ ետքը, իբրև հասարակ մարդ, շրջեցաւ քաղաքին մէջ, այցելեց գլխաւոր վաճառատուները, գոհարեղէններու գնումներ ըրաւ, իր անցքին վրայ զանազան նուէրներ տուաւ, փունջ մը մանուշակի համար, տեղ-տեղ 20 ֆր. տուաւ. ու այդպէս միջոցներ տուաւ հասարակ ժողովուրդին մէջ իր մասին անուշ խօսքեր ընելու: Թագուհին այցելեց, առանձինն, գթութեան յարկեր՝ անկելանոց, որբանոց. այցելեց նոյնպէս գոհարեղէններու վաճառանոցներ և առատ գնումներ ըրաւ:

Պօլսի ազգաբնակութեան համար նորութիւնը սա է որ ինքը, մանաւանդ Համիդի օրով, սովորած չէր մօտէն տեսնել թագակիր գլուխներ, անոնց քովէն անցնիլ. ոչ միայն՝ այդչափ, այլ և նոյն իսկ հեռաւոր բլուրներէ ներելի եղած չէր ուղղակի նայիլ դէպի իր բռնակալի որջին բարձունքը. եղած են մարդիկ որ, սոսկ նայելու հետաքրքրութեամբ, յանցապարտ նկատուելով, նետուած են բանտերու խորքը և ազատուած միմիայն սահմանադրութեան շնորհիւ: Ու այժմ տեսնել քով-քովի թագաւոր մը և թագուհի մը, համարձակիլ ծաղկեփունջ մը երկնցնել անոնց, վաճառանոցներու մէջ՝ անոնց շուրջը շարուիլ անուշ հետաքրքրութեամբ՝ զարմանալի ըլլալու չափ նորութիւն է:

Մեր պատրիարքին՝ միջոց չտրուեցաւ թագաւորին այցելութիւն տալու: Թերթերուն մէջ հրատարակուեցաւ, թէ բուլղար դեսպանատունը, մինչև վերջին րոպէն, լուր տուած չէ կարգադրութիւն մը ընելու. թագաւորը ինքն ալ յայտնած էր, թէ իրեն բան մը հաղորդուած չէ հայոց պատրիարքը ընդունելու մասին: Ամէն պարագայի մէջ յայտնապէս կը տեսնուի, թէ գլխաւոր դեսպանատունները, գուցէ գաղտնի թելադրութեան մը համեմատ, այդպիսի վախճան մը առաջ բերին:

Յայտնի է, որ պատրիարքին այցելութեան մէջ քաղաքական ոչ մէկ հայեացք չէր կրնար մուտ գտնել. [illegible] առիթ պիտի տրուէր, որ հայոց պատրիարքը, առաւելն, շնորհակալութիւններ յայտնէր այն բարեհաճ հիւրընկալութեանը համար, որ Բուլղարիան ըրաւ մեզի՝ ընդհանուր աղէտներուն շրջանի ատեն: Ու այդչափ բան շատ տեսնուեցաւ մեր պատրիարքին համար: Գրաւոր ուղերձ մը, պատրիարքին ստորագրութիւնով, պիտի ղրկուի Սօֆիա՝ թագաւորին հասցէով:

Պատրիարքը, ինչպէս կարելի ինքնին մակաբերել, բնականաբար վշտացուած ըլլալու է գաղտնի խաղցուած հնարքներու դէմ: Բանի մը օր է, որ հիւանդ է՝ անկարող պատրիարքարան իջնելու:

Բուլղարիոյ թագաւորը հազիւ թէ մեկնած, նոր պատրաստութիւններ կը տեսնուին Սերբիոյ թագաւորը ընդունելու: Տրուած լուրերու համեմատ, յաջորդաբար պիտի հասնին Աւստրիոյ գահաժառանգը և Անգլիոյ թագաւորը: Կը խօսուի Յունաստանի թագաւորի այցելութեան մասին: Այս վերջինին ալ այցելութիւնը թէև ցանկալի, բայց առ այժմ քիչ հաւանական է, որովհետև Աթէնքը տակաւին վրդովիլ մէջ կը տատանի, կրետական հարցը միշտ կիրքերու խանձը կը մխացնէ, և վերջերս հասած են շատ անախորժ լուրեր: Իբրև քրիստոնեայ, մենք ալ երբեք չպիտի ցանկայինք, որ կրետացի քրիստոնեաներ մտնէին մահմեդական աղօթատուներու մէջ ու, իբրև թշնամիք կրօնքի մը, պղծէին նոյն տեղը: Լսուածի նայելով, տեղական ոստիկանութիւնը անտարբեր գտնուած է դէպի այդ ամարդի վարմունքը:

Յունաց պատրիարքարանը մեծ պատրաստութեան մէջ է Սերբիոյ թագաւորին այցը ընդունելու համար: Անշուշտ մենք չպիտի նախանձինք. ոչինչ ունեցած ենք սերբերուն հետ, այսուհետև ալ բան մը ունենալու հաւանականութիւնը չունինք. ազգակիցներ ալ չունինք Սերբիոյ մէջ. բարի վայելում յոյներուն՝ իրենց կրօնակից թագաւորին հետ:

Յովակիմ պատրիարքը, զիջումով մը, տեղի տուաւ սինոդի օրինական պահանջումներուն, ընդհատուած ժողովները սկսան: Յոյն զինուորներ, կիրակի օր, ներկայ գտնուեցան պատարագի և, յաւարտ ժամերգութեան, ինչ ինչ գանգատներ ըրին պատրիարքին՝ իրենց նոր կեանքի մասին: Պատրիարքը, լսելով հանդերձ եղած դիտողութիւնները, յորդորեց, որ սիրով ընդգրկեն զինուորական կեանքը և յոյս ունենան, թէ հետզհետէ կառավարութիւնը կը մտցնէ բարեփոխութիւններ.

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղալաչա, 24 մարտի

Ժողովուրդը հետզհետէ բազմանում է, իսկ հողի քանակութիւնը նոյնն է մնում. հողն էլ մշտապէս վարելուց ուժասպառ է եղել. ահա այս պատճառով զանազան գիւղերից սկսում են գաղթել այլ հողաշատ գիւղեր։ Թէպէտ շատ դժուար է թողնել ծննդավայրը, բարեկամներին և ազգականներին, բայց և այնպէս ապրելու տենչը ամեն արգելքի յաղթում է. սակաւահողութիւնից սաստիկ նեղվում են բարանացիք, կողբեցիք. սրանք իրանց վարի մեծ մասը Թուրք աղաների կալուածքներում են կատարում անհագին նիւթական և բարոյական զրկանքներ կրելով. յիշեալից ոմանք ուզենալով ազատվել տեղափոխվում են Ջողազ (Պիպիս) գիւղը, որի օդը շատ վնասակար է մարդկանց համար, բայց հողերը շատ ընդարձակ են թէ վարելու և թէ արածացնելու համար. Բարանայից տեղափոխվում են առ այժմ 30 տուն, իսկ Կողբից 3—5 տուն, առ այժմ ժամանակաւոր, մինչև կընտելանան նրա օդի հետ. մտադրութիւն կայ գիւղը տեղափոխել աւելի յարմար տեղ։ Շատ անգամ են զանազան տեղերից ընտանիքներ եկել Ջողազ մնալու 30—40 տներ, բայց հազիւ 1—2 հոգի ազատվելով փախել են. եթէ գերմանացիք լինէին, դրախտ կը դարձնէին…

Մելքիսեդէկ քահ.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԲԱԳՒՈՒՄ

—

Բագու, 21 մարտի

Տեղիս հասարակական ժողովարանում երէկ, մարտի 20-ին, տեղի ունեցաւ Ա. Լիսովսկիի առաջին դասախօսութիւնը։

Դասախօսի հմտութիւնը գրական ու պատմական շրջանների, երևոյթների լուսաբանութեան հարցերում, նրա լեզուի ու ոճի գեղարուեստական արժանաւորութիւնը և թռուցիկ, բայց վառ գոյներով պատկերաւորելու, դիւրըմբռնելի դարձնելու կարողութիւնը քանիցս արձանագրված է եղել Թիֆլիսի լրագիրներում, ապա ուրեմն յայտնի է արդէն։

Բագւում, եթէ չեմ սխալվում, նա առաջին անգամն է դասախօսում, և պատճառն էլ այդ է, որ ունկնդիրներ քիչ կային։

Դասախօսութեան նիւթն էր. «19-րդ դարի նախերգանքը։ Հիասթափութեան շրջանը»։

Ծանօթացնելով ունկնդիրներին Ֆրանսիական հանճարի առաւելութեան և կենսունակութեան հետ, դասախօսը անցաւ Ֆրանսիական յեղափոխութեան շրջանի գլխաւոր վայրկեաններին՝ խելքին ու կամքին, որոնց ամբողջ նպատակն էր բարեփոխել հասարակական կարգերը և մարդկութիւնը կանգնեցնել անհատական ու հասարակական ազատութեան բարձրութեան գագաթնակէտի վրա։ Սակայն այդ երկուսն էլ ոչնչացան, և Նապոլէոնի անկումով Ֆրանսիայում, միաժամանակ և ամբողջ քաղաքակիրթ աշխարհում, տիրեց ռէակցիան ու սկսվեց հիասթափութեան շրջանը։

Հիասթափութեան այդ շրջանը ներկայացրեց նա երկու ճիւղաւորութեամբ. համաշխարհային հանճարաւոր գրողների երկրում՝ աւագ ճիւղաւորութիւնը Գեօթէի՝ երիտասարդ «Վէրտէրը», Շատոբրիանի՝ «Ռէնէն» և Բայրոնի՝ «Չայլդ Հարոլդը». կրտսերն է «Դօն-Ժուանը» Բայրոնի, Գեօթէի՝ «Ֆաուստը» և Միցկևիչի «Պան Տադէուշը»։

Դասախօսը ունկնդիրների վրա չափազանց լաւ տպաւորութիւն թողեց։ Վերջում դահլիճը բուռն ծափահարութեամբ ուղեկցեց դասախօսին։

Երկրորդ դասախօսութիւնը, որ լինելու է այսօր, յոյս կայ որ ունկնդիրների մեծ բազմութիւն կը գրաւէ։

Դասախօսութիւնը նշանակված էր երեկոյեան ժամը 8 և կէսին, սակայն 9-ից արդէն անցել էր, որ սկսվեց ու, ի հարկէ, վերջացաւ շատ ուշ, որ դժգոհութիւն պատճառեց շատերին։

Բայց մեղաւորը ժողովարանի վարիչներն են։

—

Ջրանցքի հարցը արդէն մտնում է նոր շրջան։

Քաղաքային դուման որոշեց ձեռնարկել Շօլլարի Ջրանցքի կառուցման։

Զանազան արտասահմանեան ֆիրմաներ իրար ետևից առաջարկում են իրանց ծառայութիւնը կապալով վերցնելու համար։

Մինչդեռ դրա հետ միաժամանակ լսվում են արտունջներ Շօլլարի Ջրի ձեռնտու չը լինելու մասին։

Տեխնիքական Ընկերութիւնը բաւական չը համարելով իր լաբօրատօրիայի կատարած 20 քննութեան արդիւնքը՝ այսօր նորից է դնում քննութիւնը շարունակելու հարցը։

Դուման աղմկալի նիստ նուիրեց Տեխնիքական Ընկերութեան բռնած այդ նոր դիրքին, որ արտայայտվեց Կ. Խատիսեանի նամակով։

Ստեղծվեց մի շատ փափուկ դրութիւն Տեխնիքական Ընկերութեան համար։

Տեսնենք կարող է պարզերես դուրս գալ այդ դրութիւնից։

Սակայն դուման ինքն էլ տարօրինակ խառնաշփոթի մէջ ընկաւ։

Քաղաքագլուխը մի քանի մերկացումներ արեց նիստում և յիշեց նոյն իսկ անուններ, որոնք իբր թէ փորձեր են արել խոչընդոտ լինելու փոխառութեան գործում։

Անուանարկվածներից մէկը՝ Ֆարուխ-բէգ Վէզիրօֆն է, որ խոստանում է դումայի առաջիկայ նիստում յայտնութիւններ անել։

Երևի տեղի կունենան նոր մերկացումներ փոխառութեան շուրջը։

Մինչ այդ՝ Շօլլարի դէմ դուրս է գալիս ուրիշ տեղից ջուր բերելու առաջարկ։

Ղուբայի գաւառում գտնվող Կօլուբօվի կալուածքում կան 28 մեծ աղբիւրներ գործածական թէ խմելու և թէ ոռոգման համար։ Դա աւելի է ձեռնտու համարվում, որովհետև 48 վերստաչափ մօտիկ է քաղաքին Շօլլայից։ Ասում են, որ այդ աղբիւրները տալիս են օրական 8 միլիօն վեդրօ ջուր։ Ահա այդ ջուրն է, որ այժմ առաջարկում են ուսումնասիրութեան ենթարկել քանակն ու յատկութիւնը որոշելու և, եթէ ձեռնտու լինի, քաղաք բերելու։

Ինչ վերաբերմունք ցոյց կը տայ քաղաքը, առ այժմ անյայտ է։

—

Հայկական կեանքում շարունակվում է միևնոյն անմխիթար վիճակը, որի մասին քանիցս արձանագրվել է լրագրական էջերում և որը տիրում է այսօր, համարեա, ամենուրեք։

Ազգային բոլոր հաստատութիւններն էլ հազիւ հազ միայն կարողանում են քարշ տալ իրանց ողորմելի դրութիւնը։

Իրանց բիւջէի պակասը լրացնելու համար դիմում են կողմնակի աղբիւրների՝ երեկոյթների, ներկայացումների և այլն՝ թէ դպրոցները և թէ միւս կուլտուրական-բարեգործական հիմնարկութիւնները։

Ի՞նչ արած, եթէ գոյութեան հիմնական աղբիւր ստեղծել չենք կարողանում։

Եւ չենք կարողանում՝ ոչ այն պատճառով, որ ձեռնհաս ու սրտացաւ գործողներ չունենք ասպարէզում, այլ որ ամեն մի բարենպատակ քայլ, նախաձեռնութիւն հասարակական այլ և այլ աստիճանների վրա, առաւել միջին ու ստորին խաւերում, հանդիպում է ոչ թէ համակրութեան ու խրախոյսի, այլ վրդովեցուցիչ անտարբերութեան, վիրաւորական տրտունջի։

Այդ փաստը ինքնըստինքեան այնքան զգալի է, որ ազգային հիմնարկութիւնների վարիչների բոլոր բացատրութիւնների մէջ գործի անյաջողութեան (խօսքս նիւթականի մասին է) խոշորագոյն մասը պատճառաբանվում է դրանով։

Մեր կեանքի գործողների առաջ առաջին խոչընդոտը հէնց այդ հանգամանքն է։

Պէտք է մաքառել այդ երևոյթի դէմ. պէտք է առաջարկել միջոցներ։ Սակայն մաքառել հնարաւոր է այն դէպքում, եթէ հասարակական անտարբերութեան իսկական պատճառները պարզված կը լինեն։

Այդ դէպքում միայն կարելի է կօնկրէտ առաջարկներ անել։

Պարզել խնդիրը՝ այնուամենայնիւ անհրաժեշտ է և անյետաձգելի։

Հասարակական մի շարք ժողովներ ու լրագրական էջեր պէտք է նուիրել այդ խնդրին։

Դա հերթական պահանջ է։

Եւ թւում է ինձ, որ պահանջ է ոչ միայն Բագուի, այլ և բոլոր քաղաքների հայ հասարակութիւնների համար։

—

Տեղական գաղութի առաջ այսօր կանգնած է մի այլ կարևոր խնդիր ևս՝ թէ ինչ ձևով յաւերժացնել հայկական բեմի 40-ամեակը Բագւում։

Նախորդ ժողովում արվել են մի քանի առաջարկներ։

Մի քանիսը դրանցից բաւականին հեռու են իրականութեան սահմաններից, և աւելի լաւ կը լինէր առաջարկները համաձայնեցնել կարելիութեան հետ։

Կարելի է, օրինակ, դնել սեփական թատրոն կամ մի մնայուն թատերական խումբ ունենալու հարցը։

Բայց այդ հարցերը, գոնէ առաջինը, ոչ մի աջողութիւն չեն ունենայ։

Դրա փոխարէն աւելի լաւ չէ՞ր լինի զարկ տալ ժողովրդական ներկայացումներին։

Թիֆլիսի օրինակը ցոյց է տալիս, որ այդ տեսակ ներկայացումները աւելի են օգտակար ու նպատակայարմար։

Ժողովրդական ներկայացումներին ոյժ տալու առաջարկը արվել է առաջին ժողովումն էլ։

Պէտք է յուսալ, որ երկրորդ ժողովում աւելի լուրջ ուշադրութեան կառնվի այդ խնդիրը։

Աշխատակից

ՇՈՒՇԻ-ԵՒԼԱԽ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳԻԾԸ

—

Բագու, 20 մարտի

Բագուաբնակ շուշեցիների հրճուանքը չափազանց է. ուր էլ գնում էք, մօտիկ ապագայում կառուցվելիք գծի մասին են խօսում։ Սարուխանեանի գրասենեակը ամբողջապէս զբաղված է այս կամ այն դիմողներին, ակցիա խնդրողներին պատասխանելով։ Անդրկասպեան երկրից եկող շուշեցիները և զանգեզուրցիները մեծ ցանկութիւն են յայտնում բաժիններ գնելու համար։

Զանազան տեղերից մինչև անգամ դիմում են ինձ և խնդրում տեղեկութիւն տալ, թէ արդեօք երբ են սկսելու շուկայ հանել ակցիաները։

Անցեալ օրը անձամբ մտայ Սարուխանեանի գրասենեակ և տեղեկութիւններ խնդրեցի ընդհանուրին բաւարարութիւն տալու համար։

Թերթելով ձեռքի տակ ունեցած փաստաթղթերը պարզվեց, որ բաժինները մտադիր են բաց թողնել ապրիլի 1-ից մինչև 15-ը։

Ընդհ. ժողովը որոշ յարմարութիւններ է ստեղծել նաև ծառայողների, բանւորների և արհեստաւորների համար, որպէսզի այդ դասակարգը ևս չը զրկվի բաժին ձեռք բերելու հնարաւորութիւնից։

Իւրաքանչիւր բաժինը արժէ 50 ր.։ Միջոց չունեցող մարդիկ կարող են այդ 50 ր. երեք ամսվայ ընթացքում վճարել այս ձևով. նախ 20 ր., երկրորդ ամիսը՝ 15 և երրորդ՝ 15 ր.։ Եւ հէնց այդ է պատճառը, որ գնողների ցանկութիւնը շատ է և թիւը՝ մեծ։

Մասնագէտների կազմած նախահաշւից երևում է, որ 17% օգուտ պիտի ունենայ այդ գիծը։ Ճանապարհների հաղորդակցութեան ինժեների ցուցմունքը, որը վերջին օրերս յետ եկաւ, այն կարծիքի է, որ Գէրանով անցնի գիծը, սակայն Սարուխանեանի ստացած թոյլտւութիւնը Եւլախից Շուշի է, իսկ միջին գիծը պիտի անցնի Աղդամից 5 - 6 վերստ հեռաւորութեամբ, աւելի մօտ հայաբնակ գիւղերից։

Շուտով լրագիրներում կը յայտարարվի թէ ակցիա բաց թողնելու մասին և թէ ծառայողներ ու գործակատարներ ընդունելու։

Ս. Գարագաշ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱՏՒՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Նամակ խմբագրութեան)

—

Հայոց պատմութեան մեր դասատուներից մէկը իր առարկայի մէջ կատարել է մի զգալի փոփոխութիւն։ Նա Բագրատունեաց թագաւորութեան մասին պատմելուց յետոյ՝ շարունակում է պատմել բուն Հայաստանում եղած դէպքերը, օսմանցոց արշաւանքները, պարսից պատերազմները օսմանցոց հետ. Շահ-Աբաս, հայոց վերանորոգչական ձգտումները, ունիթօրներ, Իսրայէլ Օրին, Ղարաբաղի մելիքները, Մխիթար Սեբաստացին և այլն։ Այնպէս որ պատմութեան ընթացքից նա հանում է Ռուբինեան թագաւորութեան պատմութիւնը, կիլիկեան հայերին համարելով մի առանձնացած, բուն երկրի հետ կապերը խզած գաղթականներ, որոնք շատ քիչ ազդեցութիւն են ունեցել Հայաստանի յետագայ պատմութեան վրա։

Նախ՝ դժուար թէ կարելի լինի Ռուբինեան թագաւորութեան շրջանի կիլիկեան անուանել «գաղութ», «գաղթականութիւն». ամեն գաղթականութիւն չէ մնում գաղթականութիւն, չէ հիմնում գաղութ։ Այժմեան բուլղարները գաղթել են Վոլգայի ափերից. ուրեմն այժմեան Բուլղարիան մի գաղո՞ւթ է, իսկ բուլղարները՝ էմիգրանտ։ Հիւսիսային Ամերիկան կազմված է եւրոպացի գաղթականներից. մի՞թէ այդ նշանակում է, թէ Միաց.-Նահանգները մի գաղութ է, իսկ ամերիկացիները՝ գաղթականներ. նրանք մի ժամանակ եղել են գաղթական. հիմա իրանց գաղթական էլ չեն անուանում. այդ ծիծաղելի կը լինէր։ 10-դ, 11-դ դարերում հայերի մի նշանաւոր մաս գաղթում-գնում է Կիլիկիա, այնտեղ սեփական թագաւորութիւն հիմնում և կենդանի կապ հաստատում բուն երկրի հետ։ Վերջանում է Ռուբինեան թագաւորութիւնը, ժողովուրդը մնում է նոյն տեղը. Զէյթունի անառիկ լեռներում նրանք ծաղկում են, հասնում մինչև մեր օրերը, երևի դեռ երկար այդպէս էլ կը մնան։ Համոզված եմ, որ այժմ ոչ մի ադանացի հայ իրան գաղթական չի համարի. նոյնպէս և 12-րդ, 13-րդ, 14-րդ դարերում, երբ ունէին սեփական թագաւորութիւն։

Երկրորդ. սխալ է, թէ կիլիկեան «գաղութը» եղել է մի կղզիացած, Հայաստանի վրա ազդեցութիւն չունեցող գաղթականութիւն։ Ռուբինեան հարստութեան ժամանակ, խաչակրաց արշաւանքների միջոցին և յետոյ՝ Հայաստանը նոր իմացաւ, որ կայ Եւրոպա, որ Բիւզանդիոնից այն կողմ կայ աւելի քաղաքակիրթ մի երկիր. այդ ժամանակ հայերը ծանօթացան կաթօլիկ եկեղեցու հետ։ Այդ շփման հետևանքները նշանակալից եղան հայերի տնտեսական դրութեան վերաբերմամբ. ծաղկում են քաղաքները, սկսվում է մանր արդիւնաբերութիւնը, կազմակերպվում են արհեստաւորների համքարութիւնները… և այս բոլորը՝ գլխաւորապէս Ռուբինեան թագաւորութեան ժամանակ և նրա միջոցով։ Երզնկայի հայերը յարաբերութիւն ունէին Արևմուտքի հետ՝ Կիլիկիայի միջոցով. այդ են վկայում Կոստանդին Երզնկացին և այդ շրջանի ուրիշ տաղերգուներ։ 16-րդ, 17-րդ դարերում Հայաստանի միջից դուրս եկան նոր հօրիզօններ, հոգևոր նոր ճըշմարտութիւններ որոնող մարդիկ. Մխիթար Սեբաստացին է ծնվում. նա պատահական բան չէր, այլ ժամանակի, հասարակական տրամադրութեան ծնունդ. հիմնվում են դպրոցներ, նրա են խուժում կաթօլիկ հոգևորականներ, ունիթօրներ… Այդ բոլորը, իմ կարծիքով, պէտք է կապել Ռուբինեանց շրջանի հետ։ Չը լինէր այդ շրջանը, չը լինէին Ռուբինեանների յարաբերութիւնները Եւրոպայի հետ, մենք յետագայ դարերի պատկերները այլ գոյնաւորումներով կը ստանայինք։

Իսկ յարգելի դասատուն ոգևորված՝ չափազանց կողմնակի և աննշան դեր է յատկացրել Ռուբինեան շրջանին, յետաձգելով նրա դասաւանդութիւնը յետագայի համար, որովհետև նրա ձևակերպութեամբ Ռուբինեանները գաղթականներ են, պատմութեան ընթացքի վրա առանձնապէս չազդող-գաղութ։

Այդ պատճառով ամբողջ դարերի շարժման բացատրութիւնը թերի է դուրս գալիս։

Պէտք է նախապէս ծանօթ լինել Ռուբինեանների շրջանի պատմութեան փաստացի և իմաստասիրական մասերին, որպէսզի կարելի լինի ճիշդ գնահատումը տալ հայկական վերածնութեանը։

Կարծելով որ այստեղ արծարծված հարցը բանասիրական բնոյթ կրելով կը հետաքրքրէ ընթերցողներին, առաջ բերի նրան, ենթադրելով որ նա կը նպաստի մշակելու որոշ կարծիք այս խնդրի վերաբերմամբ։ Անշուշտ ինքը դասատուն պատահամբ, առանց որոշ հիմունքների չէ դիմել պատմութեան ընթացքի յիշված խաթարմանը։

Գ. Ռուբէնի

ԵՐԳԸ ԵՒ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

—

Ով ծանօթ է ռուսական դպրոցական իրականութեան հետ, նա կարող է վկայել, որ վերջին տարիներս Ռուսաստանում սկսել են նայել երգի կամ երգեցողութեան ուսման վրա որպէս մի անհրաժեշտ և ուղիղ միջոցի՝ երեխային կրթելու գործում։ Թիւրիմացութեամբ ասեմ թէ՝ ժամանակից յետ չը մնալու բարի նախանձիս վերագրեմ, մեր դպրոցներում էլ են մտցրել երգ ու երգեցողութիւն, և դուք կը տեսնէք, ընթերցող, որ մեր թեմականից սկսած մինչև գաւառական ամենայետին միդասեան դըպրոցումն էլ աւանդւում են երգեցողութիւն։ Սակայն «ալխանէն ինչ է, որ չալխանէն ինչ լինի»—ասում է առակը։ Եւ այդպէս էլ է։ Մեր թեմականներում առաջին բաժանմունքից սկսած մինչև IV դասարանը անցնում են երգեցողութիւն, բայց և ոչ մի ժամանակ իսկական, մանկական մաքուր և յստակ հոգուն համապատասխան մի երգ. շարականների և տիրացուական «Ով զարմանալիների» մի կոյտ են թափում երեխայի գլխին, որ տակից դուրս գալու համար տարիներ են պէտք։ Անցէք այդտեղից գաւառական մեր խղճուկ ուսումնարանները և դուք կը տեսնէք այստեղ էլ մի նոր հօսանք. երևի «ժամանակի» ոգին ըմբռնող երիտասարդներն են, որոնք մանուկ սերնդին կրթելու գործով տոգորված՝ տեղ են գտել այս կամ այն դպրոցում և առաջ են տանում իրանց վրա դրված «սուրբ» գործը։ Իրանք նորագոյն երգեցողութեան ուսուցիչներն են։ Մեր ծխական դպրոցները վերջին անգամ բացվելուց յետոյ կարիք զգացվեց նաև երգեցողութեան ուսուցիչների. բայց այդպիսիների թիւը հրապարակի վրա կամ իսկի չը կար կամ եղածներին էլ մատների վրա կարելի էր համարել. բայց ի՞նչ անես, որ կարիք կայ և այն էլ աւելի «մեծ» ու «չաղ» ռոճիկով (ի հարկէ համեմատական չափով պէտք է հասկանալ). և ահա ամեն ոք, ով իմանում է լաւ «խաղ» ասել, ամենափոքր գաղափար անգամ չունենալով երգեցողութեան կամ ձայնագրութեան տարրական օրէնքների հետ՝ չը տարբերելով նոյնիսկ «բեմոլը» և «դիեզը» միմեանցից,—նա յայտարարում է այս ու այն՝ իրան վարձող հոգաբարձուին որպէս «երկար տարիներ պարապած այդ առարկայով մի ուսուցիչ» և վարձվում էր ու վարձվում է…

Սակայն ո՞վ է գնում այդ պարոնը. արդեօք մի անգամ ինքն իրան հաշիւ տուե՞լ է, թէ ինչ է իրան պարտականութիւնը և ինչ է պահանջում իր առարկան իրանից. ո՛չ, նա այդ չէ արել և չէ անում։ Փառք Ալլահին, չէ՞ որ մեր կեանքն էլ լի է երգերով և այն էլ աշուղական «սիրուն» ազգային երգերով. «շուն Թուրք» ու «շուն տաճիկ» իմաստներով այնքան երգեր ունենք, որ նրանք տասնեակ տարիներ բաւական են իր «վսեմ» պաշտօնի համար… Ու ցրվում է «Արեան ձայները» հարիւրաւոր օրինակներով հէնց մեր մատաղ սերնդին «կրթող» և հասարակութեան «բանիմաց» երիտասարդների և նրանց հլու հնազանդ անմեղ գառն մանուկների շրջանում։ Եւ սա փաստ է, ընթերցող, դառն փաստ։

Լինում են և ուրիշ սիստեմով դասաւանդողներ, որոնք «փախչում» են ազգային կամ աշուղական երգերից և I բաժ. սկսած մինչև III բաժ. անցնում են «Հնի քաղաք», «Ցուրտը փչեց», «Կռունկ», «Մրծեռնակ», «Ախ Հայաստան», և այլ այնպիսի երգեր, որոնք ոչ միայն չեն համապատասխանում մանկական ուրախ ու զուարթ թրթռուն հոգուն, այլ նոյնիսկ հակամանկավարժական են և շատ անգամ երեխայի վրա ունենում են բացասական ազդեցութիւն՝ նախ, որ նա (երեխան) այդ երգի մէջ շեշտված բառերը չէ հասկանում (թէկուզ վարժապետը հոգին տայ բացատրելով), երկրորդ՝ որ եղանակը իր մէջ ունի այնպիսի ելևէջներ և բարդութիւններ, որ երեխան շաբաթներ շարունակ տանջվում է, հոգին տալիս, բայց արդիւնք ոչինչ՝ երրորդ, որ—մեր կարծիքով դա ամենագլխաւորն է—այդ տեսակ մելանխոլիկ երգերը ազդում են մանկան բնաւորութեան վրա։

Հայ ուսուցիչներից նրանք, որոնք հետաքրքրվել են և հետաքրքրվում են ներկայիս մանկավարժական ծով գրականութեամբ և գործադրել են ու գործադրում են այդ՝ իրական կեանքում, նրանք անշուշտ եկած կը լինեն այն ճիշդ և մանկավարժութեան մէջ օրէնք դարձած եզրակացութեան, թէ ամեն մի առարկայ, ինչ էլ որ դա լինէր՝ հայոց լեզու, ռուսաց լեզու, թւաբանութիւն թէ երգեցողութիւն, մանուկների հետ պէտք է սկսել պարզից դէպի բարդը, ծանօթից անծանօթը, մօտիկից հեռաւորը… Ահա հէնց այս ակներև ճշմարտութիւնը պէտք է ղեկավարէ մեր երգեցողութեան ուսուցիչներին ևս, և նրանք պէտք է սկսեն մանկան հետ այնպիսի երգերից, որոնք ծանօթ են նրանց։ Այդպիսի երգերն են օրօրոցի երգերը, նանիկները, որոնք մնում են մանկան յիշողութեան մէջ օրօրոցից։ Ձեզնից շատերը լսած կը լինեն, թէ ինչպէս երեխան 7—8 տարեկան հասակում չարչարվում է յիշել այն ու երգել. ահա, այդ շրջանումն է, որ պէտք է օգնութեան հասնի երգեցողութեան ուսուցիչը և պակասը լրացնի։ Փառք Աստուծոյ, մեր կեանքն էլ լիքն է այդպիսի մանկական սիրուն, պարզ և դիւրըմբռնելի երգերով ու եղանակներով, և հայ ուսուցչի սեպուհ պարտքը պէտք է լինի ընտրութիւն անել երգերի մէջ ու այնպէս դասարան մտնել։ Ամենահասարակ բովանդակութեամբ մի երգ, որի բառերը համապատասխանէին մանկան հասկացողութեանը, և դուք կը տեսնէք, թէ այդ երգը ինչ մեծ հաճոյք է պատճառում մեր մանուկներին և նրանք ինչպէս յափշտակված այդ երգով շատ անգամ ուսուցչի հոգին հանում են՝ «մէկ էլ երգենք, պարոն ջան, մէկ էլ» բառերով։ Ուրեմն մեր բոլորիս (մանաւանդ երգի ուսուցիչների) պարտքը պէտք է լինի զարգացնել մանկան մէջ միշտ լաւը, գեղեցիկը և պարզը և ապա անցնել՝ եթէ միայն կարիք կայ՝ «Կռունկ», «Մրծեռնակ» կամ «Ա՜խ Հայաստան» երգերին՝ որոնք մեր կարծիքով ոչ մի էսթետիքական հաճոյք չեն պատճառում մեր սաներին…

Ս. Երզնկեան

ՄԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—

«Երբ մտածում եմ կոչմանս մասին, կեանքը ինձ այլևս զարհուրելի չէ թւում»։

Վ. Ֆ. Կօմմիսսարժեվսկայա

Պետերբուրգ, 19 մարտի

«Երբ հրաժարվում է այս աշխարհից գրականագէտը, նա իր ետևից թողնում է հետք. [illegible] են։ Երբ կնքում է իր մահկանացուն երաժշտագէտը, նա էլ թողնում է մի հետք. դա նրա ներդաշնակութիւնն է։ Իսկ երբ յաւիտեան բաժանվում է մեզանից դերասանը, բեմի մշտական աշխատակիցը, նա իր ետևից ոչինչ չէ թողնում։ Միայն յիշողութիւնն է մնում նրանից, որը ժամանակի ընթացքում նսեմանում է կեանքի պայմանների ճնշումի տակ և նոյնիսկ մոռացութեան տրվում»։

Այսպիսի խօսքերով սկսեց գրականագէտ Ս. Ա. Անդրիանովը, իր երէկվայ դասախօսութիւնը։

Այսօր արդէն մէկ ամիս է այն օրից, ինչ հանգուցեալ Վ. Ֆ. Կօմմիսսարժեվսկայան յանձնվեց հողին։ Սակայն պէտք է նկատել, որ Պետերբուրգի ինտելիգենցիան դեռ շարունակում է չը հաշտվել այդ իրողութեան հետ. նա այսօր էլ նրա անունը յաւերժացնելու համար անընդհատ երեկոյթներ և դասախօսութիւններ է կարգում ու կազմակերպում, որով աւելի ռելիեֆ կերպով անդրադարձնում է մեզ հանգուցեալի կոչումը, գործունէութիւնը և նպատակները՝ ռուս նորածին գեղարուեստական տաճարի համար։

Ինչումն է կայանում նրա այդ կոչման արժանիքը։

Ահա մի հարց, որ այնքան պարզ և ճըշմարիտ կերպով բնորոշեց մեզ յարգելի դասախօսը և որի այստեղ մէջ բերելը ես աւելորդ չեմ գտնում, հաւատացած լինելով որ թէ «Մշակի» ընթերցողները և թէ մեր բեմը անպայման հետաքրքրվելիս կը լինեն։

«Եթէ ես չեմ սխալվում, կարծեմ ֆրանսիական յայտնի ռոմանիստ Ժորժ-Զանդը, իր գրուածքներից մէկում շեշտում է, որ «երբ փոխվում է կեանքի իրականութիւնը, նրա հետ միասին անպայման պէտք է փոխվի և գեղարուեստը՝ անընդհատ հետևելով այդ փոփոխութեանը»։

«Հէնց այս տեսակէտից էլ՝ երբ 1900-ական թւականներից փոխվում են Ռուսաստանի կեանքի օբեկտիվ պայմանները,—ասում է դասախօսը,—երբ նրա յետևից փոխվում է և ռուսական պօէզիան, պէտք է փոխվէր և բեմական գեղարուեստը, հրաժեշտ տալով իր նախկին հնացած և մաշված շկօլային։ Եւ ահա Վ. Ֆ. Կօմմիսսարժևսկայան առաջինն է լինում, որ հրապարակ է գալիս, որպէս նոր ուղղութեան ստեղծագործող։ Մինչև 1902 թւականը՝ նա յայտնի էր որպէս սովորական դերասանուհի և խաղում էր Ալէքսանդրինեակի թատրոնում։

«Այդ թատրոնը, որպէս կլասիկ թատրոն, չէր կարողանում հաշտվել Վ. Ֆ.-ի նոր ուղղութեան հետ, և նա այսպէս թէ այնպէս պէտք է մի գեղեցիկ օր տար իր հրաժարականը։

«Դա լինում է վերոյիշեալ թւականին, որից յետոյ բացվում է նրա առաջ գործունէութեան լայն ասպարէզ։

«1904 թւականին Օֆիցէրսկայա փողոցի վրա հիմնում է իր թատրոնը և այնտեղ միայն կարողանում է, ազատ կերպով կեանք մտցնել իր փափագած նորաձևութիւնը, նոր ուղղութիւնը։

«Մինչև այդ օրը՝ բեմը մեզ համար կեանքի անդրադարձնումն էր. մենք գնում էինք թատրոն՝ տեսնելու կեանքի այս կամ այն պատկերը, իսկ Վ. Ֆ.—ճիշդ այնպէս, ինչպէս որ ռուս նորագոյն գրականութեան մէջ մտնում է անհատականութեան գաղափարը—շկօլայի մէջ մտցնում է նոյն ձևը։ Նա մեզ համար չէ ստեղծում կեանք, իր բոլոր կողմերով, այլ ուսումնասիրում է անհատը, տիպը և նա ստեղծագործում է նրան մեր առաջ։ Նախ քան մի որևէ տիպում հրապարակ գալը, Վ. Ֆ. փնտռում էր այդպիսի տիպին կեանքի մէջ, անվախ մօտենում էր նրան, ծանօթանում, ուսումնասիրում իր բոլոր կողմերով, ամբողջապէս ստեղծում էր նրան իր հոգու, մտքի մէջ և ապա միայն բեմ բարձրանում։ Եւ այս էր պատճառը, որ մենք սիրեցինք նրա խաղը, և մենք պատրաստ էինք նրան տասնեակ անգամ տեսնել նոյն պիէսայի, նոյն դերի մէջ։ Թող այդ պիէսան լինէր հին, մաշված. այդ նշանակութիւն չունէր մեզ համար. միայն թէ նա խաղար։ Եւ ամեն անգամ, երբ մենք բաժանվում էինք նրանից, անհամբերութեամբ սպասում էինք հետեւեալ խաղին, հաւատացած լինելով որ այս անգամ նա աւելի լաւ կը խաղայ, աւելի կատարելագործած կը լինի իր խաղի երաժշտականութիւնը (музыкальность) և այնքան նա աւելի քաղցր և համեղ կը թւայ մեզ։ Երբ նա բեմի վրա խորտակվում էր, ինչպէս մի երգիչ, իսկոյն դա նկատելի էր լինում մեզ, և մենք էլ նրա հետ միասին ցաւում էինք այդ անաջողութեան համար։ Նա չէր սիրում մեծ-մեծ ռէկլամներ, նա չէր խորշում սկսնակ դերասաններից, նա չէր նայում նրանց բարձրից, այլ միշտ խոնարհ՝ սիրում և գուրգուրում էր բոլորին, պատրաստ էր ուրախութեամբ լսելու իւրաքանչիւրի բացատրութիւնը, թէ մի գուցէ դրանք, այդ սկսնակները, կարողանան նոր հանքերի աղբիւրներ ցոյց տալ. և եթէ նա այդ տեսնում էր, առաջին քայլ անողը հէնց ինքն էր լինում այդ ուղղութեան մէջ։

«Այսպիսով ահա նա կամաց-կամաց կատարելագործում էր այդ ուղղութիւնը, շարունակ փնտռելով նոր աղբիւրներ և նոր միջոցներ։

«Երբ 1906 թ. ընդունում է Մէյերխօլդի բեմիսեօրութիւնը, որից նա նոր բան էր սպասում, որովհետև այն, ինչ կարողացել էր ինքը ձեռք բերել, այլ ևս չէր բաւաբարեցնում իրան, և երբ իր ռեպերտուարի երկրորդ ներկայացման մէջ, որ խաղում էր Մետերլինկի «Բէաթրիսի քոյրը», հրապարակ է գալիս, մամուլը իսկոյն նկատում է, որ Վ. Ֆ.-ի երաժշտական կենդանի ու քաղցր խաղը ճնշվում է բեմիսեօրի պլաստիկային ու սկուլպտուրային խաղի տակ։

«Այդ բանը նկատելով և ինքը՝ 1907/8 թըւականներից խզում է նրա հետ ունեցած կապը, որից յետոյ նա հանդիպում է բեմական և ցենզուրական մի շարք խոչընդոտների։

«1908 թ. հասարակական լայն հիասթափութիւնների հետ միասին, հիասթափվում է և ինքը իր համոզմունքների մէջ, և նա սկսում է տխուր կերպով եթէ ոչ փակել, գոնէ պահպանել իր նորակառոյց թատրոնը։

«Նրան թւում էր, թէ կարելի էր անվերջ ձգտել և միշտ նոր ճանապարհներ փնտռել, սակայն ափսոս, որ յանկարծ փակվում են եղած ճանապարհներն էլ և նա որոշում է, վերջին ճանապարհորդութիւնից յետոյ, հրաժեշտ տալ բեմին, որովհետև նա այլ ևս նոր բան տալ չէր կարողանում։

«Երբ մենք ճանապարհ էինք դնում դէպի գաւառները, կարծես թէ զգում էինք այդ վախճանը, կարծես թէ պատերազմի դաշտն էինք ուղարկում նրան, այնքան արտասուախառն էր այդ հրաժարականը, և ո՞վ զարմանք, մեր նախազգացումներն իրականացան։ «Եթէ բեմը այլ ևս չէ կարողանում տալ նոր բան, դա չէ նշանակում, թէ ես իրաւունք ունեմ հինը կրկնելու»։ Այսպէս է պատճառաբանում նա իր հեռանալը՝ Թիֆլիսից գրած նամակներից մէկի մէջ։

«Եւ նա գնաց մեր բեմից, յաւիտեան չը վերադառնալու համար։

«Սակայն կը գան նոր կեանքի նոր ալիքներ և նրանք կը շարունակեն այն գործը, որի հիմնադիրը եղաւ Վ. Ֆ. և որի ճշմարտութեան մէջ կասկածել ոչ ոք չէ կարող»։

Այսպէս վերջացրեց նա իր դասախօսութիւնը։

Ծայրէ ի ծայր լցված հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով վարձատրեց շնորհալի դասախօսին։ Մ. Ազեան

ՕՏԱՐԱԽՕՍ ՀԱՅ ՄԱՆԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

IV *)

Ուրեմն պարզ է, թէ ինչ ենք ուզում անել ձևափոխելով դպրոցները մանկական պարտէզների։

Մանկական պարտէզներն այն առաւելութիւնն էլ ունեն, որ գիւղացիներն աւելի կարեք ունենալով իրանց դաշտային աշխատանքի համար չափահասների օգնութեան՝ հաճութեամբ ու կանօնաւոր կերպով դպրոց կուղարկեն փոքրահասակ երեխաներին, որից և պէտք է օգտվել։ Նա խորթ աչքով չի նայի, եթէ փոքր աղջիկներին ու տղաներին միասին նստեցնենք։ Բացի այդ, ինչպէս ասացինք, երեխան վաղ ծանօթանալով հայերէնի հետ՝ վերջինս կը դառնայ նրա մայրենի լեզուին հաւասար։

Մանկական հասակն այն հասակն է, որի ժամանակամիջոցում մարդ հաւաքում է շրջապատի երևոյթների, առարկաների անունները, որպիսութիւնները, գործողութիւնները, ուստի պէտք է աշխատել քանի դեռ շատ չէ ծանրաբեռնվել մանկան մտաւոր բառարանը՝ յագեցնել այն հայերէնով։ Մանուկը ամբողջ օրը գտնվելով մանկանոցում՝ շատ քիչ ժամանակ կունենայ շփվելու իր շրջապատի հետ և հետևապէս քիչ ժամանակ կունենայ մայրենի լեզուն գործածելու, իսկ ամբողջ օրը կը խօսի հայերէն։

Վերև ասացինք, թէ հարկ է ձևափոխել դպրոցները մանկապարտէզի։ Բայց ինչպէս։ Ահա թէ ինչպէս։ Մենք ասացինք, որ օտարախօս հայ վայրերից եթէ ոչ բոլորը, գոնէ շատը ունեն՝ բաւականին թւով իրանց այս կամ այն տիպի ու դասընթացքի դպրոցները. օրինակ երկամեայ, եռամեայ, քառամեայ, նոյնիսկ մի-երկու տեղում և աւելի։ Ահա պէտք է սկսել այդ դպրոցներից։ Այն տեղերում, ուր կան երկամեայ դպրոցներ երկու ուսուցչով, շատ հեշտութեամբ և չնչին նիւթական յաւելումով կարելի է վերածել առաջին բաժանմունքը մանկապարտէզի և երկրորդը՝ դպրոցական մասերի, մի-մի ուսուցչով։ Այդպիսի դէպքում առաջին բաժանմունքը պիտի դարձնել երկամեայ, այսինքն որ երեխան երկու տարի պէտք է յաճախի այդտեղ, մի ուսուցչի ղեկավարութեամբ, որտեղ երեխան երկու տարվայ մէջ լեզուի բաւական պաշար ձեռք բերած կը լինի՝ մտնելու դպրոցական առաջին բաժանմունքը և կարող կը լինի հասկանալ ուսուցչի՝ կարդալ-գրել ուսուցանելու համար տուած բացատրութիւնները և ընթերցանութեան ու շարունակվող խօսակցութեանց միջոցով ընդլայնելու, զարգացնելու իր ձեռք բերածը։ Ի հարկէ՝ դըպրոցական առաջին բաժանմունքին միացած կը լինի և երկրորդ բաժանմունքը՝ մի ուսուցչի ղեկավարութեան ներքոյ։

Այդպիսով երկամեայ, երկու ուսուցիչ ունեցող դպրոցները կը դառնան քառամեայ՝ երկու ուսուցչով, երկու բաժնով—մանկանոց ու դպրոցական—միացած երկու բաժանմունքի։

Պարզ բան է, որ մեր խօսքը վերաբերում է այն վայրերին, որոնք հնարաւորութիւն չունեն առանձին-առանձին բաժանմունքներ, մանկանոցներ սարքելու և առանձին ուսուցիչներ հրաւիրելու։ Այդպէս պիտի փոխել և միւս դպրոցները, այսինքն ստորին բաժանմունքը պիտի վերածել մանկանոցի ու դասարանների բարձրութիւնները ցածացնել, որն աւելի մեծ օգուտ կը տայ, քան թէ ընդունենք դրանց որպէս IV, V, VI դասարաններ ու անցնենք համապատասխան գիտելիքներ, որոնք մի կողմից շատ ծանր ու անհասկանալի, հետևապէս և անօգուտ կը լինեն, իսկ միւս կողմից՝ շատ քիչ քանակութեամբ աշակերտներ կարող են օգտվել այդ բարձր դասարաններում, ուր աշակերտների թիւը maximum հասնում է 10—12-ի, այն ինչ ստորին երկու բաժանմունքներում—մանկանոցում ու առաջին բաժանմունքում—կարելի է ընդունել 50-ական երեխայ։ Գործը վերջին ձևով տանելն ունի և այն առաւելութիւնը, որ աշակերտները հիմնաւորապէս սովորելով հայերէնը՝ յետագայում բարձր դասարաններում աւելի պատրաստ կը լինեն ըմբռնելու աւանդելի գիտութիւնները։

Այս ամենը կազմակերպելն ու հսկելը կենտրոնական հոգաբարձութեան, վերահըսկիչ տեսուչների գործը պէտք է լինի, և դրամական օժանդակութիւնն էլ, ինչպէս նախորդ գլուխներից մէկում շեշտեցինք, պիտի ստացվի կենտրոնական կասսայից։ Իսկ կասսան ու՞մից։ Հարուստների՞ց, որոնց թւում կան այնպիսիները, որոնք իրանց անունով դպրոցներ են բաց անում. բայց դրանք բացառութիւններ են։ Ժողովրդի՞ց. այո, այդպիսի դէպքերում միակ աղբիւրը համարեա ժողովուրդն է, բայց նա էլ տալիս է՝ որքան կարող է, այն գումարները, որոնք այժմ գնում են ծխական դըպրոցների վրա, իսկ աւելին դժուար թէ կարելի լինի ստանալ հասարակ ժողովրդից։ Ուրեմն, ձևափոխված ուսումնարանների համար երբ հարկ լինի աւելի ծախսել, այդ դէպքում աւելացած գումարը պիտի հոգաբարձութիւնն ինքը հոգայ՝ կազմելով ֆօնդ, դիմելով օժանդակութիւն խնդրելու ընդհանուր կենտրոնական ուսումնական կասսայից, դիմելով զանազան ընկերութիւնների։ Վերջինս աւելի նպատակայարմար է, մանաւանդ եթէ ի նկատի առնենք, որ դրանցից երկուսը՝ Կ. Հ. Բարեգործ. Ընկ. ու Բ. Հ. Կուլտ. Միութիւնն ունեն, բաց են արել և բաց են անում սեփական դպրոցներ, որոնք այնքան էլ նախանձելի դրութեան մէջ չեն ու շատ էլ հեռու չեն խալիֆայական տիպի դպրոցներից, շնորհիւ բազմիշխանութեան և անհոգ վերաբերմունքի։ Ահա, փոխանակ այդպիսի դպրոցների քանակը աւելացնելու քամակից ընկնելու, լաւ չէ՞ր լինի, որ վերոյիշեալ ընկերութիւններն իրանց ուշադրութիւնը դարձնէին այդ պայմաններում եղած դպրոցական գործի բարեփոխմանը օժանդակելու վրա եթէ ոչ ամբողջ, գոնէ ուսումնական գործին գործադրվելիք գումարի — մի մասով։ Այդ կերպ օժանդակութիւնն աւելի նպատակին հասցրած կը լինէր այդ կուլտուրական հաստատութիւններին՝ քան յիշածս դպրոցների թիւը շատացնելը, դնելով իրանց օժանդակութիւնը համապատասխան վարչութեան տրամադրութեան ներքոյ ի գործադրութիւն։

Վերջացնելով խօսքս՝ ամփոփենք, թէ ինչ ենք ուզում օտարական դպրոցները բարեփոխելու և հայերէնը մայրենի լեզու դարձնելու համար.

ա) Ընդհանուր վարչական բարեկարգութիւն, այն է՝ 1) Ունենալ կենտր. դպրոցական վարչութիւն, կասսա՝ բոլոր կովկասահայ դպրոցների համար։ 2) Նոյնպիսին և ամեն մի թեմի համար, որը հպատակված լինի կենտր. վարչութեանը։ 3) Անջատել բոլոր օտարախօս վայրերը և տալ առանձին վարչութիւն, կասսա, տեսուչներ։

բ) Ծրագրային. 1) Մասնագէտների ձեռքով մշակված պարտադիր ծրագիր հայախօս դպրոցների համար. 2) Նոյնը և օտարախօս դպրոցների համար, տեղի, սպեցիֆիկ պայմաններին յարմար, մասնագէտների և այդ վայրերում պաշտօնավարող ուսուցիչների խորհրդակցութեամբ կազմված և վաւերացված բարձր իշխանութիւնից ու տեղի վարչութիւնից.

գ) Դպրոցների ձևափոխելը. Բաժանել երկու բաժնի՝ ա) Նախադպրոցական-մանկանոց և բ) դպրոցական-վարժարան ըստ տեղացիների ու վարչութեան կասսայից տուած օժանդակութեան։

դ) Տալ տեղացի ույժեր թեմի հաշուով, ուղարկելով որոշ թւով երեխաներ հայ և պետական միջնակարգ դպրոցները։

ե) Դպրոցից դուրս, ժողովրդի մէջ հայերէն լեզուն տարածելու և նրա կարևոր անհրաժեշտութիւնը ակնյայտնի դարձնելու համար՝ կազմակերպել ու տալ կիրակնօրեայ և երեկոյեան դպրոցներ, ներկայացումներ, գրադարան, դասախօսութիւններ և այլն։

զ) Յարմար մեթօդիկաներ, ձեռնարկներ և այլն՝ ուսուցչին օժանդակող միջոցներ ու ցուցամիջներ, հայերէն ու այլ լեզուներով։

և է) Նիւթական օժանդակութիւն, այդ ամենն ի կատար ածելու, դիմելով գոյութիւն ունեցող ընկերութիւններին, ժողովրդին, թեմական միջոցներից և այլն։

Տալուց յետոյ միայն կարելի է պահանջել, և գործն է միայն գործ ցոյց տուողը։ Ուրեմն միթէ դարձեալ պէտք է մոռացութեան տրվի, դարձեալ պէտք է անուշադրութեան մատնվի նոյնիսկ այն ժամանակ, երբ խօսում, բղաւում, պարտադիր ծրագիրներ են կազմում բոլոր դպրոցների համար, նմանապէս և այս տիպի դպրոցների, առանց գիտենալու, կամ աչք փակելով այն աղաղակող ճշմարտութեան դէմ, որ հայախօս դպրոցների համար կազմած ծրագիրները, վարչութիւնները, ձեռնարկները անպէտք են՝ բոլորովին հակադիր պայմաններում գտնվող օտարախօս հայ դըպրոցների համար։ Եթէ այո, ուրեմն կը լինի, որ մենք այդ բաւականին ստուար շարք կազմող դպրոցներն իրանց աշակերտներով թողնում ենք որ՝ գնան ու գան.... Արտ. Ստամբոլցեան

Եղեսիա

ԽԱՆԱԲԱԴՑԻ ՀԵՐՈՍԸ*)

Վրէժխնդրութեան համար՝ ուղղակի մարդասպանութեան դիմելն արդէն շատ սովորական երևոյթների շարքն է անցել մեզանում, թէկուզ այդ եղեռնը տեղի ունենայ որևէ չնչին գումարի, անձնական վիրաւորանքի կամ չարին՝ չար հատուցանելու նըպատակով։

Ու մենք յաճախ չենք էլ վրդովվում, որովհետև երբ արդէն գազանը զարթել է մարդու մէջ, այդ բարձր ու վսեմ էակը,—որի «սրտին պզտիկ կուգայ տիեզերաց սահմանն» (Ալիշան),—էլ ոչինչ չէ ուզում տեսնել, լսել...

Բայց ինչ կասէք մի մարդու, որ, չունենալով ոչինչ կապ, ոչինչ հաշիւ իր զոհի հետ, այլ և անձնական ոչինչ ակնկալութիւն նրանից, խեղդելով իր մէջ խղճի աղաղակը՝ վերջ է դնում կեանքին մի էակի, մի քնքոյշ էակի՝ միմիայն կատարած լինելու համար իր բարեկամի... յանձնարարութիւնը։

Ու այդ քայլն անում է ոչ թէ որևէ սրիկայ կամ աւազակ, այլ՝ մի պարզ գեղջուկ։

Այն էլ՝ ինչ պայմաններում... Նա ոչ թէ թակարդներ է լարում՝ իր որսը ձեռք բերելու համար, ոչ թէ սար ու ձոր է ընկնում՝ հետամուտ լինելու նրան, քանի որ «անմռունչ որոջը», անմեղ գառնուկն ուղղակի ինքն է դիմում... իր որսորդին։

Որսն էլ չէր կարող վարվել ուրիշ կերպ, որովհետև հաւատով էր դիմում նրան՝ իբրև խաղաղ նաւահանգստի, իբրև իր ակնկալութիւնների յուսատու և լուսատու փարոսի...

Անցքը պատահում է բուն-բարեկենդանի օրերում, երբ «ամեն տեղ ուրախութիւն, սէր ու խնջոյք էր... Էլ երիտասարդ ու ծեր չը կար. պապիս պէս պատուելի իշխանները կալերումը «լախտի» էին խաղում, ասելով՝ «բարեկենդան օրեր են, խելքներս կորել են» (Պռօշեանց). երբ, վերջապէս, գիւղացիութիւնը պատրաստվում էր «լուացարանք, սրբեցարանքի», այսինքն լուանալու, մաքրելու իր... մեղքերը և հրաժարվելու չարիքներից։

Անմեղ կոյսը, սակայն, չէր կարող չը դիմել իր կեանքի նոր ընկերին՝ հաւատով ու յոյսով, որովհետև նոր էր լսել եկեղեցու բեմի՝ «այսուհետև չէք երկու, այլ մի մարմին», ու երբ լրումն իր քաղցր յոյսերի, վերցնելով իր գլխից թագը՝ նա պատրաստվում է հանել շորերը, մտել անկողին։

Մարդ-գազանն էլ նոյնպէս հանում է, բայց ո՛չ իր հագուստը, այլ... դաշոյնը. և մի սենեակում, որ թանձրօրէն պաշտպանված էր մարդկային աչքերի ու ականջների դէմ, մի սենեակում, որտեղ, այդ բոպէներին, ոչ ոք չէր կարող ենթադրել որևէ չարիք, կատարվում է չարիքներից սոսկալին, սոսկալիներից հրէշայինը...

Վարպետ որսորդը՝ դիւային խնդով ու դահճի սառնասրտութեամբ սկսում է վէրքեր հասցնել անմեղ էակին, կտրատել նրա մասերը, բաժանել իրարից բոլոր յօդերը, քամել նրա արիւնը։

Իսկ այն կողմն ինչ ենք տեսնում...

Եկեղեցու խորհուրդը՝... սրբապղծված։

Պսակվելու դիմակի տակ՝ մարդիկ են խողխողվում...

Մանդալունի Յովհանը բերէք՝ ձայն բարձրացնելու «Ո՞վ կը տայ իմ գլխիս ջուր և աչքերիս՝ արցունքի աղբիւր, որ նստէի ու ողբայի» անմեղ կոյսի «կորուստը»։

Է. Ք. Ն.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Բ.-ի հայրապետական անդրանիկ կոնդակը, որ մինչև այսօր չէ կարդացվել, ուղարկվել է Թիֆլիսի առաջնորդին և միւս թեմական առաջնորդներին։ Կիրակի, ամսիս 28 ին կոնդակը հանդիսաւորապէս կը կարդացվի Վանքի մայր եկեղեցում։

◆ Ալէքսանդրոպօլցի դրամատէր Բաղդասարեանի յափշտակութեան գործը, ինչպէս հաղորդում են մեզ, քննվել է ամսիս 23-ին Ալէքսանդրապօլում, Երևանի նահանգական դատարանի սէսսիայում։ Ինչպէս յայտնի է, Բաղդասարեանի յափշտակութեան և դրամաշորթութեան մէջ (Բաղդասարեանին արձակելու համար ստացել են 21,000 ր.) ամբաստանվում են Ջալլադեանը և Մովսիսեանը։ Դատարանում ամբաստանեալների պաշտպանն եղել է երդուեալ-հաւատարմատար Եսայի Դոլուխանեանը, իսկ Բաղդասարեանի կողմից քաղաքացիական պահանջատէր էր երդուեալ-հաւատարմատար Ղորղանեանը։ Դատարանը, քննելով գործը, մեղաւոր ճանաչեց Ջալլադեանին և Մովսիսեանին և դատապարտեց նրանց վեցամեայ տաժանակիր աշխատանքների։

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ վրաց «Մեր քայլը» շաբաթաթերթի խմբագիր Մարիամ Կեզէլին և «Закавказье» օրաթերթի խմբագիր իշխ. Ամիրաջիբին ենթարկվում են 100-ական րուբլի տուգանքի այնպիսի յօդուածներ տպագրելու համար, որոնք կարող են անցանկալի բարդութիւններ ստեղծել ուսանող սերնդի մէջ։

◆ Մանթաշեան առևտրական դպրոցում մարտի 25-ին, վաճառականների աւագ Ա. Ն. Միլօվի նախագահութեամբ, տեղի ունեցաւ Մանթաշեան առևտրական դպրոցի հոգաբարձական խորհրդի նիստը, որին ներկայ էր և առևտրի ու արդիւնագործութեան մինիստրութեան շրջանային տեսուչ Մ. Օ. Ֆիշերը։ Խորհուրդը քննեց ուսումնարանի նոր կառուցանելիք շէնքի մակարդակը, որ կազմել են ճարտարապետներ Սարգսեան և Պօնդօյեան։ Ըստ մակարդակի՝ ընդարձակ դասարանական սենեակներին I և II յարկերում յարում են լայն կօրրիդօրներ, որ պիտի ծառայեն իբրև հանգստութեան դահլիճներ։ Ուսումնարանը ունենալու է մեծ դահլիճ հանդէսների համար, առանձին սենեակներ հաշւապահութեան, ապրանքագիտութեան համար, քիմիական արհեստանոց, ֆիզիկական կաբինէտ, մարմնամարզութեան համար սենեակ, բուֆէտ, դուշեր՝ սաների լուացվելու համար, բժշկի առանձնասենեակ, և այլն, նոյնպէս և 2 բակ՝ զբօսանքի և խաղերի համար։ Խորհուրդը հաւանութիւն տուեց մակարդակին և վճռեց անմիջապէս ձեռնարկել շինութեանը, որ գնած տեղի (Բեբուտօվսկայա փող.) և ուսումնարանի սարքի հետ նստելու է մինչև 150,000 ր.։ Շրջանային տեսուչը յայտնեց իր շնորհակալութիւնը հոգաբարձական մարմնին, որ չէ խնայում իր ջանքերը ուսումնարանի բարգաւաճման համար։

◆ Պարիզում ապրող արձանագործ Նիկօլաձէն արդէն վերջացրել է հանգուցեալ Ի. Գ. Ճավճավաձէի արձանի համար պատուիրված կիսարձանը։ Հրապարակախօսի արձանի բացումը տեղի կունենայ ներկայ տարվայ օգոստոսի 30-ին, վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան նախաձեռնութեամբ։ Վերոյիշեալ կիսարձանը ցուցադրված է եղել Պարիզի քանդակագործների այն սալօնում, որտեղ մասնակցում են միայն առաջնակարգ արուեստագէտներ։ Կիսարձանը արժանացել է յայտնի գեղարուեստագէտների նպաստաւոր քննադատութեան։

◆ Բարձրագոյն թոյլտւութեամբ գեներալ շտաբի գլխաւոր վարչութիւնը հանգուցեալ գեներալ-ադիւտանտ Միխայիլ Դմիտրիեվիչ Սկօբելևի յիշատակը յաւերժացնելու համար բացել է համառուսական հանգանակութիւն Մոսկվայում արձան կանգնեցնելու համար։

◆ Հաղբաթի եկ.-ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը այդ դպրոցի սեփական շինութեան օգտին ստացել է Ա. Բաղդասարեանից 50 ր., Ե. Ստեփանեանից և Բ. Դանիէլեանից 10-ական ր.։ Այդ գումարը, 70 ր., գտնվում է տեղական խնայող. դրամարկղում, որպէս զուտ դպրոցական շինութեան համար նուիրված գումար։

◆ Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ (Ալէքսանդրեան այգուն կից) մարտի 27-ին և 28-ին տեղի կունենան հետևեալ դասախօսութիւնները.—Երեխաների համար՝ այսօր, շաբաթ, տ. Կումսիեվան ցերեկվայ ժամը 4—5-ը կը կարդայ ռուսերէն՝ «Каштанка», հեղ. Չեխովի։ Վաղը, կիրակի, Վարվառէ Սահակեան առ. ժամը 10—11-ը կը կարդայ հայերէն՝ «Պրինցը և ծծեռնակը»։ Կը ներկայացվեն նաև շարժվող պատկերներ։ Տիկ. Բէրիևա առ. ժամը $11^1/_2$—$12^1/_2$-ը կը կարդայ վրացերէն՝ «Ընդերկրեայ երեխաներ»։ Հասակաւորների համար՝ բժ. Վ. Գամբաշիձէն երեկ. ժամը 5—6-ը կը դասախօսէ վրացերէն՝ «Առողջապահութեան մասին», իսկ բժ. Ա. Մխիթարեանը՝ ժամը 6—7-ը կը դասախօսէ հայերէն՝ «Վեներական հիւանդութիւնների մասին»։ Դասախօսութիւններին կը ցուցադրվեն նաև մոգական պատկերներ։ Մուտքը ձրի է։

◆ Կ. Պոլսի «Արևելք» լրագիրը արտատպել է «Արօր» ամսագրի № 1-ում տըպված՝ Ալ. Քալանթարի յօդուածը («Հանդիպումներ Գաբ. Սունդուկեանի հետ»), «Արօրի» ուղղագրութեամբ։

◆ Էժանագին և ձրի ճաշարանների ու թէյարանների Ընկերութեան Մասնաժողովը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Փետրվարի 27-ին Արտիստական Ընկ. դահլիճում կազմված երեկոյթից ընդհանուր մուտք է եղել 2585 ր. 30 կ., իսկ ելք՝ 525 ր. 30 կ.։ Զուտ արդիւնք մնացել է յօգուտ Ընկերութեան 2060 րուբ.։ Մասնաժողովը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր անձերին, որոնք թէ իրանց մասնակցութեամբ և թէ նուիրաբերութիւններով նպաստել են երեկոյթի աջողութեանը»։

◆ Մի հիւանդ կին իր 5 որբ մանուկներով մատնված է յետին չքաւորութեան։ Նա զուրկ է աշխատող ձեռներից և միջոցներից և ներկայումս գտնվում է ամենաթշուառ կացութեան մէջ։ Սրանով դիմում է հասարակութեան և աղերսում օգնութեան հասնել, ազատելու իր որբերին սովի ճիրաններից։ Նպաստ և օգնութիւն խնդրում է հասցնել Խարփուխսկայա փ. № 10, Նուշօ Եալաղեանին, 5-րդ քաղաքամասում։

◆ Մօտ անցեալում դադարեցված վրացերէն «Մօամավալի» թերթի խմբագիր Մելիք-Շահնազարեանին մարտի 23-ին ձերբակալել են։ Նրան մեղադրում են քրէական պատժագրքի 129-րդ յօդուածով։

◆ Երևանից մեզ հաղորդում են, որ մարտի 23-ին այնտեղ վախճանվել է Ոսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանցը 86 տարեկ. հասակում։ Նա ժամանակին հաւաքել և հրատարակել է մեր մի շարք պատմագիրների, օրինակ՝ Սմբատ Պատմագրի, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբէլեանի երկերը, հրատարակել է նոյնպէս և «Նոր-Քնարները» (հին աշուղների)։ Հանգուցեալն աւարտել էր Մոսկվայի Լազարեան ճեմարանի լիցէական բաժինը և 15 տարի շարունակ նոյն ճեմարանում աւանդել է արաբերէն, պարսկերէն և հայերէն լեզուներ։ Նրա աշակերտներն էին Սմբատ Շահազիզը, Ամիրան Մանդինեանը և այլք։ Նա Մոսկվայից Թիֆլիս տեղափոխվելով առաջին գիմնազիայում վարել է ուսուցչի և վերակացուի պաշտօններ։ Այդ ժամանակ էր, որ հանգուցեալը, Նիկ. Տէր-Յակոբեանի և Մօնաստիրցեվի հետ, հիմնեց մի պանսիօն-դպրոց, որ գիմնազիայից յետոյ միակն էր իր ժամանակին։ Կարճ ժամանակ նա վարել է նաև Գէորգեան ճեմարանում ուսուցչի և վերակացուի պաշտօններ։ Նա է հիմնել Հին-Նախիջևանի ծխ. դպրոցը։ Հանգուցեալը թողել է բազմաթիւ ինքնուրոյն և ժողոված ձեռագրեր։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Այսօր Կուբինսկի 79-րդ գունդը զինւորական վարժութիւններ կը կատարէ դատարկ փամփուշտներով, որի մասին տեղեկացվում է ազգաբնակութեանը։

◆ Ինչպէս յայտնի է, խուզարկու շները Ազատի Մելիք-Այվազեանի սպանութեան առիթով գտան մարդասպանի հետքը Հաւլաբարի մի մասում, մի ներքին յարկում։ Այժմ բոլոր փաստերը և վկաների ցուցմունքները ապացուցանում են, որ յիշեալ մարդը մեղսակից է սպանութեանը։ Այդ մարդը հայ է, Գարեգին Ղուլեան ազգանունով։ Գարեգին Ղուլեանի ընկերակիցներ եղել են թիֆլիսեցի Գրիգոր Աւ. Ազատեանը և Կարապետ Յար. Տէր-Մովսիսեանը (կեղծ անունով Մէկայդիշվիլի), որոնք ներկայումս բանտարկված են Մետեխի բանտում։

◆ Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեամբ թիֆլիսեցի Լևոն Տէր-Գալստեանը իր տանը առանց պաշտօնական թոյլտւութեան երեկոյթ կազմելու համար ենթարկվում է 25 րուբլի տուգանքի կամ երկու շաբաթով բանտարկութեան։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը կարգադրեց 4 րդ քաղաքամասի պրիստաւին հսկել, որպէսզի Սոլդատսկի բազարում հին զգեստներ վաճառողները անպայման ունենան հարկաւոր վկայաթղթերը և հին զգեստների վրա կպցված լինի ախտահան կամերայի նշանը։

◆ Թէև գեներալ-նահանգապետի այն կարգադրութիւնը, որի համաձայն արգելվում էր քաղաքով անցնել ծածկոցը փակ կառքերով, արդէն վերացվեց, բայց և այնպէս շատ քաղաքապահ ոստիկաններ կանգնեցնում են այդպիսի կառքերը և ծածկոցը բանալ տալիս։ Ոստիկանապետը խիստ պատժի սպառնալիքով արգելում է այդպէս վարվել։

---

*) Տես «Մշակ» №№ 64, 65 և 66.

*) Տես «Մշակ» № 53.

◆ Ռումինական պաշտօնեաները և զինւոր պահակները շարունակում են շուրջկալ կատարել ամեն մի քաղաքամասում և ձերբակալել անգործ և անանցաթուղթ մարդկանց։

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

◆ Գերմանիայի Միւնխէն քաղաքում շուտով տեղի կունենայ գործագործութեան ցուցահանդէս։ Կ. Պոլսի գերմանական հաստատութիւններից մինը վերջերս մտադրել է այդ ցուցահանդէսն ուղարկել 50 հայուհիների, որոնք հէնց ցուցահանդէսում իրանց ձեռքով շինած գործերն են ցուցադրելու։

◆ Ծարբերդում հրատարակվող «Եփրատ» կիսամսեայ հանդէսը զետեղել է Սիվանից ստացված մի թղթակցութիւն, որի մէջ խօսվում է այդ շրջանի հայ-քիւրդերի մասին։ Թղթակցի ասելով նրանք բոլորովին անտեղեակ են իրանց հայկական ծագումին, իրանց խաչական անունին ու ազգային լեզուին։ Բայց այս՝ լեզուով ու տարազով քիւրդ համայնքը, որ միշտ հլու-հպատակ է եղել իր աղաների բռունցքին, կարողացել է անեղծ պահպանել իր պապերից ժառանգած կրօնասիրութիւնը, որ արգելք է հանդիսացել այդ ժողովրդի իսպառ օտարացման՝ կապելով նրան միշտ հայկական եկեղեցուն։ Այդ ժողովրդից որեւէ մէկը երբ հիւանդանում է, ուխտում է գնալ եկեղեցի և խորանի առաջ ընկնել և գլուխը Աւետարանի տակ դնել։ Հայ-քիւրդերը եկեղեցուն նուէր են ուղարկում տէրողորմեաներ՝ աղօթելով որ իրանց ճանապարհորդութիւնն անվտանգ անցնի և իրանց գործն աջողութեամբ պսակվի։ Հայ-քիւրդերի աւանդական սովորութիւններից մին էլ այն է, որ նրանք եկեղեցու դրանը հաւաքված աղքատներին հաց են բաշխում։

Թղթակցի ասելով այս Ծնունդի առիթով այդ շրջանի հայ-քիւրդերը, տօնական օրվանից մի-երկու օր առաջ, առաւօտ-երեկոյ խումբ-խումբ եկեղեցի են դիմել և խոստովանվել են ու թաթախման երեկոյեան էլ հաղորդվել ամենամեծ ջերմեռանդութեամբ։ Պատարագից յետոյ՝ ջրօրհնէքի արարողութեան ընթացքում դպիրները երգել են իրանց քիւրդական մասնաւոր առոգանութեամբ։

Կ. Պոլսի «Հայրենիքը», քաղելով յիշեալ տեղեկութիւնները «Եփրատից», Հայոց Միացեալ Ընկերութեան լուրջ ուշադրութիւնն է հրաւիրում հայ-քիւրդերի կուլտուրական առաջադիմութեան գործին սատարելու խնդրի վրայ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Դերասան Գեղէվանով-Միրաղեանի յոբելեանական ներկայացումից յետոյ մի համապատասխան և պատշաճ ապօթէօզի նախագիծ որոշելու համար կազմված է մի մասնաժողով, որի կազմը բաղկացած է հետեւեալ անձերից՝ Ա. Բուդէն, Ա. Սարաջիշվիլի և Ս. Կլդիաշվիլի։

◆ Ծիաթուրայի վրաց դրամատիքական ընկերութիւնը որոշել է մասնակցել Գեղէվանով-Միրաղեանի յոբելեանին և իբրև ներկայացուցիչ ուղարկել Ս. Տարուաշվիլիին։ Իսկ մայիսի 2-ից յետոյ հրաւիրել նրան Ծիաթուրայում կազմակերպվելիք ներկայացմանը մասնակցելու համար, որի ամբողջ եկամուտը, ընկերութեան նուէրի հետ միասին, յատկացնել յոբելեարին։

◆ Վրաց երիտասարդ դրամատուրգ Գլախաշվիլին փոխադրել է մի նոր պիէս 1 գ. «Հրամայողի ձերբակալութիւնը» խորագրով, որի նիւթը վերաբերում է ex-սուլթան Աբդիւլ Համիդի գահընկէցութեանը։ Գլախաշվիլին յայտնի է վրաց գրականութեան մէջ որպէս հեղինակ «Ծարաւ» յայտնի պիէսի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, 20 մարտի

«Մշակի» № 57-ի գաւառական տեղեկութիւնների բաժնում տպված էր Շուշուց «Զ» ստորագրութեամբ մի լուր, ուր լրատուն նկարագրելով Աշոտ եպիսկոպոսի օրօք կատարված պատգամաւորական ընտրութիւնները թեմ. դպրանոցի հոգաբարձութեան և թեմ. խորհրդի համար՝ ի միջի այլոց ասում է. «Կոնսիստորիայի կարգապահը իր գործը թողած կուսակցութիւններով է պարապում և քաղաքի խաղաղ մթնոլորտը պղտորում։ Նա թոյլ է տուել իրան ամեն մի գործակալի ծրարներում դնել նաև մի-մի մասնաւոր նամակ, գործակալական շրջաններից ընտրելու այս և այն անձին... Որովհետև գաւառի ընտրութիւնները կատարված են կարգապահի ներշնչման և ազդեցութեան ներքոյ, ուստի լաւ կը լինի, որ Էջմիածինը բեկանի այդ բոլոր ընտրութիւնները...» և այլն։

Այդ առիթով հարկ եմ համարում ասել. Նախ՝ կարգապահը պաշտօնական ծրարների մէջ մասնաւոր նամակներ չէ դրել։

Երկրորդ՝ գործակալները կախումն ունեն թեմի առաջնորդից, կոնսիստորիայի անդամներից և իրանց վերատեսուչ գործակալից, որոնք միայն կարող են, եթէ ցանկանան, ներշնչել և ճնշում գործ դնել գործակալների վրա, մանաւանդ գործակալների վերատեսուչը, որը ստորադրեալ գործակալների «տակն էլ գիտէ, գլուխն էլ», որը նրանց մասին լաւ և վատ «attestation» տուողն է իշխանութեան առաջ, որը գաւազանի մի շարժումով ամենքին կը սրբէ և նրանց տեղ նորերին կը բուսցնէ։ Իսկ ինչ կարող է անել մի երկրորդական, երրորդական տեղ բռնող կարգապահ պաշտօնեայ, որին գործակալներից մի քանիսը նոյնիսկ չեն էլ ճանաչում։

Երրորդ՝ այս ընտրութիւնների գործում կոնսիստորիայի կարգապահը և միւս ծառայողները (բացի առաջնորդից և անդամներից) նոյնչափ ազատ են, որչափ ամեն մի շուշեցի և թեմի ժողովրդի իւրաքանչիւր անհատ։ Նրանք իրաւունք ունեն, որպէս իրաւասու ծխականներ, ազատ քաղաքացիներ, և՛ ընտրել, և՛ ընտրվել, և՛ ագիտացիա անել Շուշում թէ դրսում՝ լինի նա բանաւոր, թէ գրաւոր, այդ միեւնոյն է, քանի որ այդ ընտրութիւնները կոնսիստորիայի պաշտօնեաների ընտրութիւններ չեն և նրանք շահագրգռված չեն։ Ո՞ր ընտրութիւնների ժամանակ մարդիկ ազատ ագիտացիա չեն անում ի նկատի ունենալով գործի շահը։ Պետութեան ո՞ր օրէնքը կամ ծխ. ժողովների և ընտրութիւնների վերաբերեալ կանոնադրութեան ո՞ր կէտն է արգելում ազատ կերպով ագիտացիա անելը։

Այս կը լինի իմ առաջին և վերջին պատասխանը Զ-ին։ Կարգապահ

Վարդաշէն, 16 մարտի

«Մշակի» № 53-ում Ճալէթի ծխ. դպր. հոգաբարձութիւնը ի հերքումն իրանց ուսուցչի վերաբերեալ «Մշակի» № 36-ում գրված նկատողութիւնների (Յուս» ստորագրութեամբ, Վարդաշէնից)՝ պարտք է համարել յայտնել, որ «իրանց ուսուցիչը ոչ մի օր դասերը չէ դադարեցրել ռոճիկը անկանոն ստանալու առիթով»։

Ճշմարտութիւնը միանգամայն մոռացված տեսնելով յիշեալ հոգաբարձութեան կողմից՝ Վարդաշէնի ծխ. դպր. ուսուցչական կազմը յանուն արդարութեան պարտք է համարում յայտնել հետեւեալը.

1) Ճալէթի ծխ. դպ. ուսուցիչ Վ. Խոհաբարեանը փետրվարի 7-ին, երեկոյեան, Վարդաշէնում Ն. քահ. Մանուկեանի բնակարանում ինքը յայտնեց բոլոր ներկայ եղողներին, որ դադարեցրել է պարապմունքները պայմանագրի համաձայն (կարդաց նաև պայմանագիրը), ռոճիկի երրորդ նուագը լրիւ ստացած չը լինելու պատճառով։

2) Վ. Խոհաբարեանը հետեւեալ օրը (երկուշաբթի, 8 փետրվ.) այդ նոյն պատճառով պարապմունք չէ ունեցել Ճալէթի դպրոցում, այլ լսել է մեր դասերը Վարդաշէնի դպրոցում։

3) Այդ նոյն օրը, տեսնելով որ ոչ ոք Ճալէթից չէ գալիս գոհացում տալու իր պահանջին, պարոնը վերադարձաւ Ճալէթ շարունակելու դադարեցրած պարապմունքները։

Վարդաշէնի ծխ. դպ. ուսուցչ. կազմ

«Ի»-ի ԵՒ «Վ»-ի ԱՌԻԹՈՎ

Երբ ես սկսեցի թերթել Մալխասեանի յօդուածը «Աւրօրի» մէջ, ինձ սկզբում այնպէս թւաց, թէ Մալխասեան, ի նկատի ունենալով գրութեան որոշ, մասնաւոր դէպքեր, մտադիր է իր յօդուածի մէջ լուսաբանելու և մի շատ փոքր՝ մասնաւոր միտք. ինչքա՞ն աւելի առաւելութիւն տալ վ-ին թէ՞ ւ-ին բառերի որոշ ձևերում. գրել՝ վարվել, կործանվել թէ՞ վարւել, կործանւել, կամ թէ մի այլ տեսակ։

Այդ հարցը հին հարցերից մինն է և նրան իր ժամանակին շատ որոշակի կերպով պատասխանել է Գր. Արծրունին իր գրական պրակտիկայով, իր գրութեան երկարամեայ ընթացքում գործադրելով վ-ը աւելորդ ւ-ի տեղ ոչ միայն կրաւորական բայերում, այլ և այն բոլոր օտարազգի և բուն ժողովրդական բառերում, ուր վ հնչիւնը թանձրանում է մինչև իր տիպիկական արտասանութեան խստութիւնը։ Դա անցած շրջանն է, և կարդալով Մալխասեանի յօդուածը՝ ես այն կարծիքին էի, թէ նա շօշափում է միեւնոյն խնդիրը՝ նրան իր սովորական շրջանակների մէջ վճռելու համար։

Բայց ես զարմացայ, երբ հասայ յօդուածի վերջնական, ընդհանրացուցիչ եզրափակութիւններին։ Երեւում է, որ Մալխասեան անդառնալի կերպով վճռել է վռնտել ւ-ը մեր այբբենարանի միջից, նրան գրելու գոյութեան ունեցող չը համարել և մտցնել վ-ը ամենուրեք, ուր լսվում է v հնչիւնը, լինի դա բառի արմատ թէ վերջաւորութիւն, օտարազգի բառ թէ գրականութեան մէջ դարերի ընթացքում սրբագործված բուն հայկական խօսք։

Մշտական, խելացի և նպատակայարմար բարենորոգութիւններն անհրաժեշտ են, ի հարկէ, և գրութեան մէջ։ Անկարելի է հարիւրաւոր և հազարաւոր տարիների ընթացքում մնալ գրութեան միեւնոյն շատ անգամ անլօգիկական ձևերի մէջ, երբ մարդկանց լեզուն, նրանց առոգանութիւնը, որոնց հրաւիրված են ձևակերպելու մեր տառերը, անդադար փոփոխվում են և այլակերպվում։

Բայց, ձեռնարկելով հայկական լեզուի գրութեան աշխատանքին, չէ կարելի ամբողջութեամբ կենտրոնանալ նրա մի հնչմանը վրա և, այս կամ այն եզրակացութեանը գալով, բառերը վ-ի սեկցիայի ենթարկել, այն բառերը, որտեղ ւ-ը դարերի ընթացքում կատարել է, կարծեօք, իր օրինական պարտաւորութիւնները։ Դա կը նշանակէ չափից դուրս գրավել իր եզրակացութեան սրութեամբ, լինել ուղղագիծ իր դատողութիւնների մէջ և ընդ նմին չընդգրկել խնդիրը իր բոլոր խոշորութեանը մէջ։ Եւ, ճշմարիտ. լօգիկական ինչ հիման վրա մենք ամբողջովին պիտի կենտրոնանանք վ-ի կամ ւ-ի վրա, երբ մեր այբբենարանի մէջ և միւս հնչիւնները նոյնքան, եթէ ոչ աւել, իրաւունք ունեն մեր ուշադրութեանը առաջ։ Ինչո՞վ է, օրինակ, պակաս իր առաւելութիւնների մէջ՝ տիպական առոգանութեան տեսակէտից, դիցուք, օ հնչիւնը արխայական ո-ի դէմ, տ-ն՝ թ-ի դէմ, պ-ն՝ փ-ի դէմ, կ-ն՝ f-ի դէմ, r-ն՝ ռ-ի դէմ, հ-ն՝ յ-ի դէմ, և այլն։

Թւում է, թէ Մալխասեան, կենտրոնանալով մեր այբբենարանի մի հնչմանը վրա և իր մտքերը ւ-ի և վ-ի վերաբերմամբ իրանց ծայրերին հասցնելով, շուաքի տակ է թողել մեր միւս հնչիւնների բարենորոգման խնդիրը և ընդ սմին՝ չափից դուրս սեղմելով իր շօշափած խնդրի շրջանակները՝ սխալ եզրափակութիւնների հասել։

Եւ, ճշմարիտ. ենթադրեցէք մի րոպէ, որ դատողութիւնների այս կամ այն ուղիով Մալխասեան հասել է այն եզրակացութեան, որ հնչման օ նշանը ունի իր անհամեմատելի առաւելութիւնները ո նշանի դէմ, պ-ն՝ փ-ի դէմ, տ-ն՝ թ-ի դէմ, և այլն և, ինչպէս ւ-ի և վ-ի վերաբերմամբ, իր եզրափակութիւնները նա վճռել է տարածել ամբողջ հայկական լեզուի և գրութեան վրա։ Ի՞նչ կարգեր կը ստեղծվէին մեր ուղղագրութեանը մէջ։

Մի ուրիշ խօսք ևս։ Մալխասեանը, ըստ երևոյթին, չէ սիրում ռ նշանը և նրա բացասական արժէքը գնահատում է մի միլիոն ռուբլի։ Հետաքրքրական է, որ այդ տեսակէտը բաժանելով հանդերձ, նա շատ հանգիստ կերպով շարունակում է գրել վրայ (կարելի է կարդալ և՛ врай), թէև վրա ձևը, կարծեօք, քաղաքացիութեան իրաւունքներ է ստացել գրականութեան մէջ և իր կոչած տեսակէտից Մալխասեան պիտի ջատագով լինէր այդ մի անգամ պատրաստված ձևին։ Ես մասնաւորից եմ լինում Մալխասեանի մտքերի ելևէջների վրա։ Մի դէպքում, նա աչքի առաջ ունենալով գրութեան որոշ ձևեր, ընդհանրացնում է իր եզրակացութիւնները մինչև կանոնների և օրէնքների բարձրութիւնը, միւս դէպքերում նա մնում է անյաջորդական-պահպանողական, պահպանողական նոյնիսկ այնտեղ՝ որտեղ դա անհարկաւոր է։

Ինձ թւում է, եթէ խնդիրը մէկ քիչ լայն դրվէր, Մալխասեան, նախքան քարկոծելու ւ-ը բառերի արմատների մէջ և գրելու՝ բավական, լավ, ավազ, կաշխատէր նախ և առաջ լուրջ ուշադրութիւն դարձնել գրականութեան մէջ ներս մտնող բուն ժողովրդական բառերի գողտրիկ գրութեանը և ըստ այնմ գողտրիկ արտասանութեանը վրա, ի հարկէ նախ և առաջ կազմելով իր համար որոշ տեսակէտներ նրանց հնչիւնների պէսպիսութիւնների մասին, իսկ մեր գաւառական բարբառներում (Ղարաբաղի, Նոր-Նախիջևանի և այլն) ռ, բ, փ, f հնչիւնները հասել են արդէն իրանց ականջ խլացնող բթութեան, մի հանգամանք՝ որը պէտք է վերագրել պարսիկների և թուրքերի կենակցութեանը հայերի հետ և այդ ազգերի քաղաքացիական իշխանութեանը։ Նոյնը կարելի էր անել և եւրոպական բառերի ուղղագրութեանը վերաբերմամբ։

Այդ աշխատանքը, բացի զուտ քերականական տեսակէտից, կամփոփէր իր մէջ և գեղագիտական նկատումներ հայկական լեզուի մշակման և կոկման ժամանակ։

Մոսկվա Ա. Ղուլեանց

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 մարտի

ՏՈՒԼՈՆ։ Վեց հակա-ականանաւեր գնացին Մարսէյլ Ալժիրի հետ Ֆրանսիայի պօստային յարաբերութիւնները պահպանելու համար։

ՎՈԼՈԳԴԱ։ Քաղաքային դուման որոշեց միանալ նահանգական զեմստվօյի միջնորդութեանը՝ Եւրոպական Ռուսաստանը ջրային ճանապարհով Սիբիրի հետ միացնելու մասին՝ երկիրը կենդանացնելու նպատակով։

ԳՐՕԴՆԱ։ Զինւորական-նահանգական դատարանը մահվան պատժի դատապարտեց մի զինւորի, որ փ. 27-ին փողոցում զանակով վիրաւորել էր գնդապետ Նիկիտինին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բացվեց ռուսական թռչնապահութեան ռուսական ընկերութեան Պետերբուրգի բաժանմունքի հերթական ցուցահանդէսը։

ՄՈՍԿՎԱ։ Վախճանվեց կայսերական թատրոնների երգիչ Գորէվը։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Նաւահանգստի գլխաւոր կառավարիչ Բոստրէմը մեկնեց Պետերբուրգ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ պօստատար գնացքը 11 ժ. 40 ր. գիշեր., Գանձակ է հասնում 6 ժ. առաւօտ., Եւլախ՝ 8 ժ. 9 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 12 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 45 ր. ցերեկ., Բագու՝ 6 ժ. 9 ր. երեկ.։ Մարդատար գնացք № 6՝ 8 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 2 ժ. 32 ր. գիշեր., Եւլախ՝ 4 ժ. 41 ր. գիշեր., Հաջի-Կաբուլ՝ 9 ժ. 12 ր. ցերեկ., Բագու՝ 2 ժ. 10 ր. ցերեկ.։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով, միայն ըստ հարկի կարևորութեան, 7 ժ. 3 ր. առ., Բագու է հասնում 11 ժ. 43 ր. կէսօրվայ։ Արագացված գնացք № 12՝ 10 ժ. 11 ր. երեկ., Գանձակ է հասնում 4 ժ. 13 ր. գիշեր., Եւլախ՝ 6 ժ. 8 ր. առ., Հաջի-Կաբուլ՝ 10 ժ. 32 ր. ցեր., Բալաջարի՝ 1 ժ. 45 ր. կէսօր., Բագու՝ 2 ժ. 20 ր. ցերեկ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պօստատար 1 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 12 ժ. 21 ր. ցեր., Էջմիածին կայարան՝ 5 ժ. 30 ր. եր., Նախիջևան՝ 11 ժ. 30 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 4 ր. գիշ.։ Մարդատար ապրանք.՝ 4 ժ. 20 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 16 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 46 ր. առ., Ուլուխանլու՝ 9 ժ. 16 ր., Երևան՝ 10 ժ. 14 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացք չորրորդ կարգի վագոններով՝ ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 8 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ՝ 6 ժ. 56 ր. առ., որից դէնը այլ ևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 7՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բաթում է հասնում 9 ժ. 42 ր. առ.։ Պօստայինը՝ 9 ժ. 42 ր. երեկ., Բաթում է հասնում 11 ժ. 48 ր. առ.։ Մարդատար № 5՝ 1 ժ. գիշ., Բաթում է հասնում 2 ժ. 8 ր. ց.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պօստատար գնացքը 8 ժ. 42 ր. առաւ., մարդատար № 5 12 ժ. 11 ր. գիշ., Արագացված № 11՝ 10 ժ. 47 ր. առ.։ Վերջին գնացքը չէ գնում Բագում։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6՝ 7 ժ. 21 ր. երեկ., պօստայինը՝ 10 ժ. 40 ր. երեկ., մարդատար № 8՝ 12 ժ. 17 ր. կէսօրին։ Վերջին գնացքը Բագու չէ գնում։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պօստատար 6 ժամ 19 ր. առ., մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 44 ր. երեկոյեան։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ խառն գնացք 4-րդ կարգի վագոններով՝ 4 ժ. 48 ր. գիշերվայ։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏԵԱՆ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒԴԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ՁԻԼԲԵՐՇԱՅ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. Ֆ. ԲՈՂԴԱՆՕՎԱ—9½—1 ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՁԻԼԲԵՐՇԱՅ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՆԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. Ֆ. ԲՈՂԴԱՆՕՎԱ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—33

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 5—7 ժ. երեկ.
Միքայէլեան փող., № 36. Տելեֆօն № 388
(օ. մ.) 1216. 100—94

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կաէնիեվսկայա փ., № 6, «Վէտցել» հիւրանոցի մօտ։ (Ե. Հ. Շ.) 955. 100—74

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւն
ամեն օր (առաւօտեան ժ. 12½—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—12½.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(օ. մ.) 1044. 100—95

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—99

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ.
Ընդունելութիւն
ամեն օր | առաւօտեան 9—12 ժ.
| երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—96

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների ուղղմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, յուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, զեղերի քսումն (втирание) նոյնպէս էլեկտրականութիւն ռևմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեկտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկներ։ Խորհուրդը 50 կոպ.։ Ընդունելութիւն՝ կանանց—3—3½ ժ., տղամարդանց—3½—4½ ժ.։ Семеновская ул.. № 9.
(Կ. Հ.) 77. 50—18

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԳԵՆՏ
Տեղական եւ օտար քաղաքների լրագիրների ու ամսագիրների համար։
Մ. Ա. ԳԱԺՕՆԻԱ
Ընդունվում են ձեռնտու պայմաններով ամեն տեսակ յայտարարութիւններ՝ ինչպէս տեղական, նոյնպէս և օտար քաղաքների լրագիրների ու ամսագիրների համար։ Իմ ծառայութիւնից օգտվել ցանկացողներին խնդրում եմ դիմել այս հասցէով. Тифлисъ, Великокняжеская, № 40.
Տելեֆօն № 216.
(Ե.Հ.Շ.) 339. 15—3

!ԶԱՏԿԻ ՀԱՄԱՐ!
ԿՈՐՁԵՆ ՈՍԿԷ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԸ!
ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!



Որովհետև տղամ. նորաձև ժամաց., ֆրանս. ոսկուց, բաց, շքեղ նկար. «Prima-Roskop» մարկայով, ոչ որ, նոյնիսկ մասնագէտը չէ կարող զանազանել 56⁰/₀ յարգի ոսկէ ժամացոյցից։ «Prima Roskop» ժամաց. բացի շքեղութիւնից՝ շէկյար. ամենայաւ կազմուածքն ունի, Ժընէվի յայտնի ֆաբրիկայի գործ։ Լարումը կռթից՝ 40 ժ. մի անգամ, „Remontoir“, մինչև րօպէները ուղղված ընթացքով, 6 տ. գրաւոր երաշխաւորութեամբ։ Գինը առաջ 15 ր. էր, այժմ միայն 2 ր. 90 կ., 2 հատը 5 ր. 40 կ.։ Այդ ձևի խաւ ժամացոյց՝ հատը 4 ռուբ. Մեր ֆիրմայի արտադրութիւնները տարածելու համար՝ մենք կցում ենք իւրաքանչ. ժամաց. իբրև պրեմիա՝ միանգամայն ձրի— 1) Շքեղ շղթայ նոյն ոսկուց. 2) Բրէլոկ նորութիւն! Աւտօմատիկ կինէմատօգրաֆ հետաքր. տեսարաններով, կամ թէ արծաթից, 84 յարգի ոսկեզօծ. 3) Դ-ր Վոլի ծխափող-ապարատ՝ անվնաս ծխելու համար, կամ թէ՝ գրպանի սրբոր. գրելու առարկաներով. 4) [illegible] պատ ժամաց. փոշուց պահպանելու համար։ Պատուէրներն ուղ. ենք վճարովի վճ. և առ. համաձայն.։ Հասցէն՝ ВАРШАВА, М. Складъ часовъ. Т-во «Милано», Дикая ул. № 3 — Ճանապարհածախսը հաշվում է 1—4 հատի համար 50 կ.։ Ով տեսնէ այդ ժամաց., նա կը հաւատայ, որ նա իսկական ոսկուց է։ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Կանացի ժամաց., բաց, նոյն նիւթից շինված, կանացի կօմպլէտով—3 ր. 90 կոպ.։ Թղթակցութիւնները ռուսերէն կամ գերմաներէն։
(շ.) (В. 22560) 314. 2—2


Вѣрный другъ женщинъ
Кремъ Казими
Метаморфоза
Продано болѣе двухъ милліоновъ банокъ
Радикально устраняетъ веснушки, угри, пятна, морщины и другіе дефекты лица
Утв. Департ. Торг. и Мануф. за № 4683
Требуйте подпись
Casimi

(П.15567) 111. 8—8

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ՉՔԱՒՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ «ԼՈՅՍ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի հաղորդելու Ընկերութեան մեծարգոյ անդամներին, որ կիրակի, մարտի 28-ին 1910 թ. առաւօտեան ժամը 10-ին ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ դահլիճում նշանակված է Ընկերութեան տարեկան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Օրակարգի խնդիրներն են.—1. Զեկուցումն վարչութեան. 2. Հաշւետւութիւն 1909 թ. 3. Զեկուցումն վերստուգիչ յանձնաժողովի. 4. 1910 թ. նախահաշւի հաստատումը. 5. Ընտրութիւններ վարչութեան նոր անդամների, փոխ-անդամների և վերստուգիչ յանձնաժողովի անդամների։

Վարչութիւնը խնդրում է յարգոյ անդամներին ներկայ լինել որոշեալ ժամին, որպէսզի ժողովը չը յետաձգվի։ Նոր անդամներ կարող են գրվել նախ քան ժողովի բացումը։

347. 1—1

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.